

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ¹

ԲԱԺԻՆ I. ՀԱՎԱԿՈՒՈՒՄՑԻՈՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի «Հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը» բաժնում, որպես նախաբան ներկայացված նյութը չի բնութագրում ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը:

Բացի այդ, ենթաբաժինների հերթականությունից հասկանալի չէ թե ինչ խնդիր է լուծում հակակոռուպցիոն քաղաքականությունը: Նախքան «Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում 2019-2022 թվականներին, առկա մարտահրավերները» ենթաբաժնին անցնելը կարիք կա նկարագրել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակը:

Առաջարկություն

- Որպես բաժնի նախաբան/ներածություն ներառել ՀՀ արդարադատության նախարարության կողմից պատրաստված «2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ամփոփ արդյունքները» զեկույցի համապատասխան նյութը, որը ամփոփ կնկարագրի հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը:
 - Փոփոխել բաժնի կառուցվածքը և նախքան «1. Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում 2019-2022 թվականներին, առկա մարտահրավերները» և «2. Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների գնահատական» ենթաբաժնին անցնելը՝ ներկայացնել «3. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» գնահատականը, որը նաև ընկալելի կդարձնի հակակոռուպցիոն քաղաքականության հիմքում դրված խնդիրները:
2. «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» ենթաբաժնի երկրորդ պարբերությունում գրված է. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԹԻ ԿԸՀ)՝ 2022 թվականի համար ակնկալվող 42,8% բարելավման փոխարեն արձանագրվել է 31,4%, ինչը ևս էական ձեռքբերում է 2018 թվականի համեմատությամբ: Այսինքն, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը, ըստ էության, իր դրական արձանագրումն է ստացել նաև հասարակական ընկալման մեջ»: Նման

¹ Առաջարկությունները ներկայացվում են Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի, Իրավունքի պաշտպանությունն առանց սահմանների ՀԿ և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից:

եզրահանգման համար առկա չեն համապատասխան հիմքեր՝ գնահատումներ, հարցումներ: Բացի այդ, 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախանշված էր 2022 թվականին ապահովել ԹԻ ԿԸՀ-ի 55 տոկոսային մակարդակ: Մինչդեռ, առավելագույնն ապահովվել է 49 միավոր, որը հետագայում նվազել է 3 միավորով: Առկա իրավիճակում դժվար է հիմնավորել, որ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների 80 տոկոսանոց կատարումը ապահովվել է ԹԻ ԿԸՀ-ի բարելավումը: Բացի այդ, 2019-2022 թվականների ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով նախանշված էր նաև ապահովել Համաշխարհային բանկի (ՀԲ) կոռուպցիայի վերահսկման համաթվի աճ 10 տոկոսի սահմաններում: Վերջինիս կատարման մասին ռազմավարության նախագծի կոռուպցիայի իրավիճակի գնահատման ենթաբաժնում որևէ գրառում կամ հիշատակում բացակայում է:

Առաջարկություն

- Վերաշարադրել նշված պարբերությունը՝ հիմք ընդունելով ԹԻ ԿԸՀ-ի և 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված համաթվի մակարդակը, այսինքն՝ 55 միավորը:
 - Միաժամանակ, դիտարկել նաև ՀԲ-ի կոռուպցիայի վերահսկման համաթվի մասով 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ ստանձնած պարտավորության կատարման մակարդակը:
3. «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» ենթաբաժնում բավականին մանրամասն են նկարագրվել վերջին տարվա ընթացքում նվազում արձանագրած հետազոտությունների հարցերը, որի անհրաժեշտությունը ռազմավարության փաստաթղթում, կարծում ենք, չկա, առավել ևս, որ այդ նվազումից հետո էլ նշված հետազոտությունների արդյունքներով հաշվարկված ենթահամաթվերը ամենաբարձրն են մյուս չորս համաթվերի համեմատությամբ: Նաև այսպիսի փաստաթղթում չարժե հղում կատարել Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից տրված հարցազրույցներին:

Մյուս կողմից, ընկալումն ու իրավիճակը նկարագրող այս ենթաբաժնում անդրադարձը չի կատարված տնային տնտեսությունների հարցումների հիման վրա վերհանված խնդիրներին: Մասնավորապես, Հայաստանում վերջին այդպիսի հարցման արդյունքները հրապարակվել են 2022 թվականին Հետազոտական ռեսուրսների կրկնապայան կենտրոն-Հայաստանի կողմից:²

Առաջարկություն

- Թրանսփարենսի Ինթերնեյշնլի Կոռուպցիայի ընկալման համաթվին անդրադառնալ առավել ամփոփ:

² «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն» զեկույց, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

- Ենթաբաժնում ներառել հղումներ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորված՝ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության» 2022 թվականի զեկույցի արդյունքների:
4. Նույն «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» ենթաբաժնի չորրորդ պարբերությամբ «Միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների անդրադարձը մոնիթորինգին և գնահատմանը», ենթավերնագրի ներքո «ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում³ և ՏՀԶԿ 5-րդ պիլոտային փուլի 2021թ. գնահատման արդյունքներով ներկայացված Ե «հակակոռուպցիոն իրավական գործիքների և վարչական միջոցների պարբերական մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի ներդրման, հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողությունների ծրագրի սահմանումը, համապատասխան մեթոդաբանության և մոնիթորինգի ու գնահատման համակարգի ստեղծումը, մոնիթորինգ և գնահատում իրականացնող մարմինն անհրաժեշտ ռեսուրսների և ինստիտուցիոնալ կարողությունների ապահովման հարցերը»: Այս պարբերությունը կապ չունի կոռուպցիայի իրավիճակի գնահատման և նկարագրության հետ:

Առաջարկություն

- Նշված պարբերությունը հանել ռազմավարության նախագծի տեքստից կամ տեղափոխել ռազմավարության նախագծի մոնիթորինգի և գնահատման բաժին:
5. Նույն «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» ենթաբաժնի վերևից հինգերորդ և վերջին պարբերություններում «...քաղաքացիների ընկալումը կոռուպցիայի վերաբերյալ» մասում Միջազգային հանրապետական ինստիտուտի ծրագրի շրջանակներում 2023 թվականի հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում իրականացված հարցումներից⁴ մեջբերված Ե. «Մասնավորապես, հարցվածների 9 տոկոսը լիովին բավարարված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) աշխատանքով, իսկ 36 տոկոսը ընդհանրապես բավարարված չէ ԿԿՀ-ի աշխատանքով: Հարցվածների 8 տոկոսը չեն պատասխանել կամ տեղյակ չեն եղել ԿԿՀ գործունեության վերաբերյալ»: Այս դրույթը, որը չի բնութագրում կոռուպցիայի տարածվածության վերաբերյալ հանրության ընկալումները կամ համապարփակ պատկերացում չի տալիս հանրային ընկալումների մասով կոռուպցիայի իրավիճակի վերաբերյալ: Նշված մեջբերումը ընդամենը գնահատում է ԿԿՀ-ի ճանաչելիությունը, վերջինիս գործունեությունից բավարարվածությունը, բայց ոչ, կոռուպցիայի տարածվածությունը և իրավիճակը: Նույնը վերաբերում է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն»-ից մեջբերված «պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին

³https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf

⁴ [Armenia Final-Presentation_08.05.2023_Arm.pdf](#)

իրագրվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի» պարբերությանը: Նշված հարցումների արդյունքները վկայում են հակակոռուպցիոն մարմինների մասին իրագրվածության, այլ ոչ թե կոռուպցիայի իրավիճակի և դրա տարածվածության մասին:

Առաջարկություն

- Վերոնշյալ պարբերությունները հանել ռազմավարության նախագծի տեքստից և ենթաբաժինը լրացնել նշված հարցումներից կոռուպցիայի իրավիճակը բնութագրող արդյունքներով և տվյալներով:
6. «Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների գնահատականը» ենթաբաժնում նշված է, որ «Հայաստանի Հանրապետության կողմից Գազաթնաժողովի շրջանակներում հանձնառությունների ծավալը սահմանվել է Վարչապետի ելույթով, որոնք հետևյալն են.
- Մինչև 2026 թվականը հասնել համեմատական ցուցանիշների շարունակական բարելավումների, մասնավորապես Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցիչի 50 միավորից հասնել 60-ի:
 - Մինչև 2026 թվականը հասնել համեմատական ցուցանիշների շարունակական բարելավումների, մասնավորապես Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման ինդեքսի 49 միավորից՝ 60-ի»:

Ժողովրդավարության գազաթնաժողովում կոռուպցիայի դեմ պայքարի մասով ՀՀ Վարչապետի կողմից ստանձնած վերոնշյալ ցուցիչները, որպես ռազմավարության նպատակային ցուցիչներ արտացոլված չեն առաջիկա 4 տարիների հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում:

Առաջարկություն

- ԹԻ ԿԸՀ և ՀԲ Կառավարման համաշխարհային ցուցիչի վերոնշյալ ցուցիչները իրենց գնահատականներով ներառել հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում՝ սահմանելով որպես ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական արդյունքային ցուցիչներ:

ԲԱԺԻՆ II. ՀԱԿԱԿՈՐՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱԿԱԿՈՐՈՒԴՅՈՒՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. «Բաժին II. Հակակոռուպցիոն քաղաքականությունը 2023-2026 թվականներին. հակակոռուպցիոն ռազմավարության նպատակները և ուղղությունները» բաժնում մինչև ըստ առանձին ուղղությունների նպատակներին անցնելը կարևոր է ունենալ հակակոռուպցիոն ռազմավարության ընդհանուր/հիմնական նպատակը, ակնկալվող

արդյունքները, տվյալ մակարդակում գնահատման ցուցանիշները: Պետք է հասկանալի լինի հակակոռուպցիոն քաղաքականության տրամաբանական կառուցվածքը: Ինչպես ցանկացած ռազմավարություն, այս ռազմավարությունը նույնպես պետք է ունենա ընդհանուր նպատակ (overall goal) և այդ նպատակին հասնելու համար սահմանված խնդիրներ (objectives): Այդպես եղել է Հայաստանի նախորդ բոլոր հակակոռուպցիոն ռազմավարությունների դեպքում և այդպես է նաև միջազգային ստանդարտը:⁵ Սա անհրաժեշտ է որպեսզի ըստ ուղղությունների ձևավորվեն ենթանպատակները և դրանց արդյունքները: Վերջինս կարևոր է նաև ապահովելու ՀՀ Վարչապետի 2021 թ. դեկտեմբերի 12-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» N 1508-L որոշմամբ հաստատված՝ ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույցի պահանջները: Հակառակ դեպքում՝ հետագայում ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիտորինգի իրականացման փուլում հնարավոր չի լինելու ապահովել ռազմավարության և դրա նպատակներին հասնելու ընդհանուր գնահատականը: Ցուցանիշները կարող են արձանագրվել կամ նշված բաժնում կամ ռազմավարության մոնիտորինգի և գնահատման բաժնում, սակայն դրանք պետք է ուրվագծված լինեն այս փաստաթղթում:

Ռազմավարության նախագծի տեքստում ներկայացվող «Նպատակները» կարող են լինել ընդհանուր նպատակից բխող ենթանպատակներ, այլ ոչ թե առանձին նպատակներ:

Առաջարկություն

- Ինչպես նախկին ՀՀ հակակոռուպցիոն բոլոր ռազմավարություններում, առանձին բաժնով ներկայացնել ռազմավարության նպատակը, ենթանպատակներն ու խնդիրները, իսկ ռազմավարության բաժիններում նկարագրված այդ նպատակին և ենթանպատակներին հասնելուն ու լուծման ենթակա խնդիրներին ուղղված կոնցեպտուալ քայլերը,
- Սույն ռազմավարության կառուցվածքում պահպանել հակակոռուպցիոն ռազմավարություններին ներկայացվող միջազգային ստանդարտների պահանջները:

⁵ UNODC, Technical Guide to the United Nations Convention Against Corruption, 2009, page 4: “The UNCAC approach to prevention of corruption is premised on the need for a coherent framework that moves from general principles to clear and realistic strategies, action plans and procedures, and regular monitoring of implementation of measures to apply the strategy. This requires a comprehensive and coordinated approach, from the systematic collection and collation of quantitative and qualitative information on the basic situation in the country, to a strategy that sets overall goals that are then translated into objectives and action plans in order to enable comparison with the results achieved and enable adjustments to the policies and their implementation. The processes of drafting, adoption, implementation and monitoring and assessment of the strategy should be planned, led and coordinated among all relevant stakeholders (public and private sectors, civil society) and cover the full range of sectors or areas where corruption might occur.”

ՆՊԱՏԱԿ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

8. Նույն բաժնի «Նպատակ 1. Կոռուպցիայի կանխարգելում» ենթավերնագրի ներքո կարևորվել է «հակակոռուպցիոն 2019-2022թթ. ռազմավարությունում ինստիտուցիոնալ մարմինների դերակատարումը՝ օրենսդրական փոփոխությունների, նոր կառուցակարգերի ու ընթացակարգերի սահմանման, հակակոռուպցիոն նոր գործիքակազմերի, այդ թվում էլեկտրոնային և թվային տեխնոլոգիաների կիրառման, կոռուպցիայի դեմ պայքարի սահմանափակումների ու արգելքների սահմանումը»: Այդուհանդերձ, Նշված պարբերությունը չի բնութագրում և սահմանում կոռուպցիայի կանխարգելման նպատակը:

Ավելին, Նշված ենթաբաժնի երկրորդ պարբերությամբ Նշված է, որ միայն 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով է «նախանշվել կոռուպցիայի դեմ իրական պայքարի հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները», որը իրականությանը չի համապատասխանում, քանի որ կոռուպցիայի կանխարգելման հարցերը արձանագրվել և կարևորվել են նախորդ բոլոր հակակոռուպցիոն ռազմավարություններում:

Նույն ենթաբաժնի վերջին պարբերության երկու նախադասությունները բովանդակությամբ միմյանց կրկնում են: Ընդ որում, վերջին պարբերության մեջ Նշված է «...հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը» բառակապակցությունները, որտեղ անհասկանալի է, թե հրն է տարբերությունը «բարեվարքության ամրապնդման մեխանիզմների» և «բարեվարքության համակարգի կատարելագործման» միջև:

Առաջարկություն

- Նշված բաժնում անհրաժեշտ է սահմանել 2023-2026թթ. կոռուպցիայի կանխարգելման ուղղության հիմնական նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցիչները:
 - Համանման մոտեցում անհրաժեշտ է կիրառել նաև Ռազմավարության մյուս նպատակների համար, որի վերաբերյալ անդրադարձ կա Ընդհանուր բնույթի նկատառումներ և առաջարկություններում:
9. «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության ներքո նկարագրված և որպես հիմնական գործողություն դիտարկված են ԿԿՀ-ին նոր լիազորությունների վերապահման առանձին դրվագներ: Մասնավորապես, «...նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացումը», հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում դատավորների, դատախազների և քննիչների ընթացիկ բարեվարքության, քննիչների թեկնածուների բարեվարքության ստուգման գործառնությունները», որոնց հիման վրա և հիմք ընդունելով ԿԿՀ-ի, որպես «միջազգային պարտավորություններ ունեցող հատուկ կարգավիճակով գործառնական

անկախությամբ օժտված մարմնի» կարգավիճակը, առաջարկվում է գնահատել ԿԿՀ-ի կարողությունները, հատկապես հաստիքների ավելացման գործում:

Նախ, առկա է հակասություն Ռազմավարության նախագծով առաջարկվող և ներկայումս շրջանառվող՝ «Շնտրական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» e-draft համակարգում գետնոված նախագծերի փաթեթի <https://www.e-draft.am/projects/5805/about> մոտեցումներում: Նախքան կարողությունների գնահատումները պետք է հստակեցնել, թե որ կառույցն է իրականացնելու նախընտրական քարոզարշավի ընթացքում նախընտրական հիմնադրամին կատարվող մուծումների և ծախսերի նկատմամբ վերահսկողությունը՝ ԿԿՀ-ն, թե Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ այնպես, որ տեղ չմատարընկալումների:

Ռազմավարության նախագծի կանխարգելման, ինչպես նաև մասնավոր ոլորտի ուղղությունների մյուս բաժիններում կրկին հիշատակվում է ԿԿՀ-ի գործառնությունների ընդլայնման խնդիրը: Մասնավորապես, կոռուպցիոն ռիսկերի գնահատման նոր գործիքակազմի ներդրումը, իրավական ակտերի նախագծի հակակոռուպցիոն փորձաքննությունների իրականացումը, մասնավոր ոլորտում, պետական մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բարեվարքության նկատմամբ վերահսկողության իրականացումը, էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգումը, գնումների գործընթացում վերահսկման նոր գործիքակազմերի կիրառումը, որոնց նկատմամբ վերահսկողության գործառնությունները նույնպես նախատեսվում է վերապահել ԿԿՀ-ին: Յետևաբար, «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» բաժնում միայն բարեվարքության ստուգման գործիքի կիրառման շրջանակի ընդլայնման մասով ԿԿՀ-ի հաստիքների ավելացման կարևորումը բավարար չի, քանի որ ամբողջական պատկերացում չի տալիս կարիքների մասին:

ԿԿՀ-ի կարիքների գնահատման բացակայության պայմաններում, անհասկանալի է, թե ինչպես է 2019-2022 թվականների ընթացքում վերջինիս հաստիքները ՀՀ Վարչապետի որոշմամբ հասցվել 57-ի: ԿԿՀ-ի հաստիքների ավելացման խնդիրը անհրաժեշտ է դիտարկել նաև արդեն իսկ առկա հաստիքների համալրվածության տեսանկյունից: Մասնավորապես, անցած 4 տարիների ընթացքում ԿԿՀ-ն մեծ վարչական ռեսուրսներ է ծախսել թափուր հաստիքների մրցույթների իրականացման և համալրման գործընթացներում, որի արդյունքում 2022թ. աշխատակազմը համալրված է ընդամենը 70 տոկոսի շրջանակներում: Մյուս կողմից, ԿԿՀ-ի կարողությունների զարգացման և կարիքների գնահատման, հաստիքների համալրման հանգամանքները պետք է դիտարկել նաև միջազգային կազմակերպությունների կողմից ԿԿՀ-ին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրերի տեսանկյունից: Այս իմաստով, 2020 թվականից ԿԿՀ-ի կարողությունների զարգացմանն են լծված ԱՄՆ ՄՉԳ «Բարեվարքություն» ծրագիրը, ինչպես նաև ԵՄ և ԵԽ դատաիրավական բարեփոխումների, համայնքների բարեվարքության զարգացման ծրագրերը, որոնցում առկա են ԿԿՀ-ի կարողությունների զարգացման բաղադրիչ: Այդ ծրագրերի շրջանակներում ԿԿՀ-ի կարողությունները բնականաբար գնահատվել են, որի շրջանակներում էլ աջակցություն է ցուցաբերվել: Այդ

են վկայում ԿԿՀ-ի 2021 և 2022 թվականների ԱԺ-ին ուղղված ամենամյա հաղորդումները:⁶

ԿԿՀ-ի կարողությունների գնահատման մասով ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի՝ 1.1 գործողությամբ նախատեսվում է 2025 թվականին «ԿԿՀ թափուր հաստիքները համալրել առնվազն 50%-ով», իսկ 2026 թվականին՝ այն հասցնել 80 տոկոսի»: Որպես արդյունքային ցուցանիշ՝ դիտարկվում է «ԿԿՀ-ի հաստիքները ավելացել են, վերջիններս և թափուր հաստիքները համալրվել են առնվազն 80%-ով»: Նշվածի արդյունքում ստացվում է, որ ԿԿՀ-ն դեռևս հաջորդ 3 տարիներին շարունակելու է աշխատել հաստիքների թերհամալրվածության պայմաններում, որը ռիսկային է ռազմավարության նախագծով այս կառույցին վերապահվող նոր գործառնությունների իրականացման տեսանկյունից: ԿԿՀ-ի հաստիքների ավելացման և համալրման խնդիրը ածանցյալ է ռազմավարության նախագծով ԿԿՀ-ին նոր գործառնությունների վերապահումից, որը բնականաբար պետք է գնահատվի և տրամադրվի:

Առաջարկություն

- «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության ներքո ԿԿՀ-ի կարողությունների զարգացման խնդիրն անդրադառնալ համակողմանիորեն՝ վերջինիս ռազմավարության նախագծով վերապահվող կանխարգելման միջոցների նոր գործիքակազմերի, ընդլայնվող գործառնությունների շրջանակի ամբողջական նկարագրությունից հետո:
- ԿԿՀ-ի կարողությունների զարգացումը դիտարկել նաև աշխատակազմի վերապատրաստումների, գույքային և ֆինանսական միջոցներով ապահովվածության տեսանկյունից՝ գնահատելով ԿԿՀ կարողությունների բոլոր բաղադրիչները:

10. «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության ներքո դիտարկված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների «Էթիկայի հանձնաժողովների և բարեվաթության հարցերով կազմակերպիչների ինստիտուցիոնալ համակարգի զարգացման» խնդիրը: Հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովների գործունեությունը պահանջում է համակարգում: Այս տեսանկյունից, թե հանրային ծառայողների և թե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց Էթիկայի հանձնաժողովները չունեն միասնական համակարգում: Նշված խնդիրը արտացոլված էր նաև 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, որը սակայն չի իրականացվել:

Էթիկայի հանձնաժողովների ձևավորման և գործունեության խնդիրներ են առկա նաև պետական առանձին մարմիններում: Մասնավորապես, խնդրահարույց է ԱԺ պատգամավորների Էթիկայի հանձնաժողովի գործունեությունը, քանի որ ինչպես ցույց է տալիս պրակտիկան այն, ըստ էության, չի գործում: Բացի այդ, խնդրահարույց է նաև

⁶ <http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf>, <http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf>

դատախազների էթիկայի հանձնաժողովի ձևավորման մեխանիզմը, որն, ի դեպ, նշված է նաև ԳԲԵԿՈ-ի հանձնառություններում: Խնդրահարույց է կամ բացակայում են համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց, մասնավորապես համայնքի ավագանու, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց մասով էթիկայի հանձնաժողով ձևավորելու օրենսդրական հիմքերը: Այս բոլորը, ինչպես նաև հանրային ծառայության մյուս մարմիններում էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ խնդիրները մանրամասն նկարագրված են ԹԻՉԿ-ի կողմից կազմած «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը, հակակոռուպցիոն պայքարի հիմնախնդիրները, մարտահրավերները և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունները» փաստաթղթի⁷ 3.1.1-ից 3.1.7 բաժիններում:

Ռազմավարության նախագծի 2023-2026թթ. գործողությունների ծրագրի 1.4 կետում վերոնշյալ կոնկրետ խնդիրների լուծումները բացակայում են: Ընդհանրական ձևով նախատեսում է գույքագրել և հետո օրենսդրական ակտերի նախագծերով համալրել միայն պետական և համայնքային ծառայության էթիկայի հանձնաժողովների խնդիրները, մինչդեռ առանձին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՍ) համար դրանք բացակայում են: Բացի այդ, օրինակ՝ համայնքային ծառայողների, համայնքի ավագանու և համայնքային հայեցողական պաշտոնյաների համար դեռևս մշակված չէ էթիկայի հանձնաժողովի մոդելը, պարզ չէ թե ինչ մոտեցումներով են դրանք կազմավորվելու ու գործելու: Հանրային ծառայության մի շարք տեսակների համար էթիկայի հանձնաժողովի փոխարեն գործում են կարգապահական հանձնաժողովներ (քննիչներ, զինվորականներ այլ ծառայողներ), որոնք իրավասու չեն վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման մասով իրականացնելու քննություններ ու ներկայացնելու առաջարկություններ: Նշված բոլոր խնդիրները անհրաժեշտ է կոնկրետ գործողությունների տեսքով ներառել «էթիկայի հանձնաժողովների ձևավորման ու գործունեության ապահովման» միջոցառման ներքո, որպես ինքնուրույն գործողություն, իրենց համապատասխան ակնկալվող արդյունքներով և գնահատման ցուցիչներով:

Բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի մասով համակարգային խնդիրները ներկայացված են ԹԻՉԿ-ի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը, հակակոռուպցիոն պայքարի հիմնախնդիրները, մարտահրավերները և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունները» փաստաթղթի 3.1.8 բաժնում:

Առաջարկություն

- ԿԿՀ-ին վերապահել էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթը, որի համար Ռազմավարության նախագծի «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության բաժնում և գործողությունների ծրագրի 1.3 և

⁷ Փաստաթուղթը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն» ծրագրի դրամաշնորհի շրջանակներում և տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարությանը և ԿԿՀ-ին 2022 թվականի օգոստոսին:

1.4 կետերում նախատեսել նշված լիազորությունների վերապահման մասին միջոցառում:

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.3 կետում «Կատարելագործել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը» գործողության ներքո ներառել հետևյալ գործողությունները՝
 - բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության հարցերով խորհրդատվության տրամադրման գործառույթը,
 - օրենսդրորեն ավարտին հասցնել ՄԻՊ աշխատակազմում, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում, ՀՀ Դատական դեպարտամենտում, ՀՀ ԱԺ աշխատակազմում, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունում, ՀՀ քննչական կոմիտեում քաղաքացիական ծառայության համակարգին անցման կարգավորումները՝ ապահովելով նշված մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ներդրումը և բնականոն գործունեությունը,
 - «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի ընդունմամբ սահմանել ԱԺ աշխատակազմում բարեվարքության հարցերով կազմակերպիչի հաստիք, որը կապահովի, ինչպես ԱԺ էթիկայի հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այնպես էլ՝ կիրականացնի պատգամավորներին բարեվարքության հարցերով խորհրդատվության տրամադրում,
 - մշակել ՏԻՄ մարմինների աշխատակազմերում բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ներդրման մոտեցումները ու մոդելը,
 - պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին ապահովել հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական ու մեթոդական նյութերով, շահերի բախման կառավարման, բարեվարքության վերապատրաստման կարիքների բացահայտման և ծրագրերի մշակման, վարքագծի կանոնադրերի կազմման ուղեցույցներով, բարեվարքության վիճակագրության վարման ձևաթղթերով ու հրահանգներով, բարեվարքության թեմայով ուսումնասիրությունների իրականացման և կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանություններով,
 - հանրային ծառայության մասին օրենքով բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահված լիազորությունների իրականացման համար մշակել և իրականացնել պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստման մասնագիտական դասընթացների ծրագիր,
 - վերանայել պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչ պաշտոնի դասակարգման մոտեցումները, սահմանելով նշված պաշտոնի կարգավիճակին ներկայացվող պահանջներն ու պայմանները այն հաշվով, որ այդ հաստիքները ունենան առնվազն հանրային ծառայության

ղեկավար պաշտոնի կարգավիճակ, իսկ առանձին մարմիններում այդ գործառնությունները վերապահել տվյալ մարմնի ներքին վերահսկողությունն իրականացնող օղակներին:

- Ռազմավարության նախագծի 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 1.4 կետում «Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը» կետում ներառել էթիկայի հանձնաժողովների մասով հետևյալ գործողությունները՝
 - օրենսդրորեն ավարտին հասցնել ՄԻՊ աշխատակազմում, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում, ՀՀ Դատական ղեկարտամենտում, ՀՀ ԱԺ աշխատակազմում քաղաքացիական ծառայության համակարգին անցման կարգավորումները՝ ապահովելով նշված մարմիններում քաղաքացիական ծառայության էթիկայի հանձնաժողովի ձևավորման պայմանները, գործունեության պահանջները,
 - օրենսդրությամբ ՀՀ ոստիկանության, ՀՀ Ազգային անվտանգության մարմինների, ինչպես նաև զինվորական ծառայողների (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության) կարգապահական հանձնաժողովներին վերապահել նշված ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտման դեպքերի վերաբերյալ դիմումների ընդունման և հարցերի քննության գործառնությունները,
 - սահմանել համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու պայմանները, կազմը և գործունեության պահանջները,
 - հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների էթիկայի հանձնաժողովների բոլոր անդամների ու թեկնածուների համար մշակել և իրականացնել բարեվարքության վերապատրաստման ծրագիր՝ ներառելով ինչպես մասնագիտական, այնպես էլ բարեվարքության ընդհանուր ճանաչողական դասընթացներ:
 - սահմանել համայնքի ավագանու և համայնքային հայեցողական ու վարչական պաշտոն զբաղեցնող անձանց համար էթիկայի հանձնաժողով (ներ) ձևավորելու պայմանները և կարգը,
 - սահմանել քննիչների, այդ թվում քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց մասով էթիկայի և կարգապահական հանձնաժողովի ձևավորման նոր կարգ,
 - սահմանել դատախազների էթիկայի հանձնաժողովի ձևավորման նոր կարգ՝ այն հաշվով, որպեսզի դատախազների էթիկայի հանձնաժողովում ընդգրկվեն ճշող մեծամասամբ դատախազներ և ընտրվեն իրենց գործընկերների կողմից,
 - ՀՀ ԱԺ պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովին վերապահել մշտական հանձնաժողովի կարգավիճակ: Հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենա դիմումներ ընդունել քաղաքացիներից և վարույթներ իրականացնել սեփական նախաձեռնությամբ, վարույթների արդյունքում կայացնել որոշումներ կամ ընդունել եզրակացություններ, որի հիման վրա էլ պատգամավորների նկատմամբ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ:

11. «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության և Գործողություն 1.5 ներքո դիտարկված է նաև ԿԿՅ-ի կողմից բարեվարքության և ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարումը և հրապարակումը: Նախ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բարեվարքության պահանջների պահպանման մասով վիճակագրության վարման գործառույթը արդեն իսկ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքով պահանջվում է ԿԿՅ-ից: Հետևաբար, այն ռազմավարական խնդիր դիտարկելը խնդրահարույց է: Օրենքի պահանջները պետք է իրականացվեն և ԿԿՅ-ն նախորդ 4 տարիների ընթացքում կարող էր միջազգային կազմակերպությունների տեխնիկական օժանդակության շրջանակներում իրականացնել այդ աշխատանքները: Այդուհանդերձ, ԿԿՅ-ն դեռևս լիարժեք աշխատանքներ չի իրականացրել վիճակագրական տվյալների հավաքագրման ու ձևավորման՝ մեթոդաբանության և ձևաթղթերի մշակման գործում: Փոխարենը՝ Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.5 կետով նախատեսվում է մշակել «Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույցներ»:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի տեքստից և գործողությունների ծրագրի 1.5 կետից հանել բարեվարքության պահանջների վերաբերյալ վիճակագրության վարման դրույթները, իսկ դրանց մշակման ապահովումը իրականացնել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքից բխող միջոցառումների շրջանակում:

12. «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ուղղության ներքո դիտարկվում է նաև «...ամկա էլեկտրոնային հարթակների զարգացումը, այդ հարթակներում կոռուպցիայի կանխարգելման տարբեր գործիքների ինտեգրումը, ինչպես նաև ԿԿՅ-ի և այլ պետական մարմինների միջև ինտեգրացիաների և փոխգործելիության ապահովումը»: Կոռուպցիայի կանխարգելման գործառույթներով պայմանավորված էլեկտրոնային ռեեստրների ստեղծումը, դրանց փոխգործակցելիության ապահովումը այլ պետական, ՏԻՄ մարմինների համապատասխան էլեկտրոնային բազաներին կարևորագույն խնդիր է: Համաձայն ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.6 կետի, նախատեսվում է բարելավել հայտարարագրման գործող էլեկտրոնային համակարգի վերլուծական մոդուլը, կուսակցությունների ֆինանսավորման, նվերների ընդունման և հաշվառման, բարեվարքության ստուգման մոդուլները: Մինչդեռ, բաց է մնում շահերի բախման դեպքերի արձանագրման, հավատարմագրային կառավարման պայմանագրերի հաշվառման ռեեստրների ձևավորման հարցերը:

Բացի այդ, ռազմավարության նախագծով նախատեսվում է ներդնել իրավական ակտերի նախագծի հակակոռուպցիոն փորձաքննության, պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման կանխարգելման գործիքները, որոնք նույնպես պահանջում են էլեկտրոնայնացված համակարգերի կիրառում:

Առաջարկություն

- Շահերի բախման դեպքերի արձանագրման, հավատարմագրային կառավարման պայմանագրերի հաշվառման ռեեստրների, իրավական ակտերի նախագծի հակակոռուպցիոն փորձաքննության, պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման էլեկտրոնային մոդուլները նույնպես ներառել նշված բաժնում կամ գործողությունների ծրագրի 1.6 բաժնում նախատեսված միջոցառումները տարրալուծել կոռուպցիայի կանխարգելման համապատասխան գործիքների ներդրումը ապահովող բաժիններում:

13. Ռազմավարության նախագծի «Իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն ազդեցության գնահատում» վերտառությամբ բաժինը որպես կոռուպցիայի կանխարգելման ինքնուրույն ուղղություն դիտարկելը նպատակահարմար չէ: Այն կոռուպցիայի կանխարգելման գործիք է և պետք է ներառվի կանխարգելման այլ գործիքների շարքում, ինչպիսիք են հայտարարագրման համակարգը, կոռուպցիոն ռիսկերի գնահատումը, բարեվարքության ուսումնասիրությունները: Նաև նշված ուղղության վերնագիրը չի համապատասխանում վերջինիս ներքո շարադրված տեքստի բովանդակությանը, որտեղ օգտագործվում է «իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն» եզրույթը:

Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.7 կետում նախատեսվում է ուսումնասիրել միջազգային փորձը և ընտրել հակակոռուպցիոն փորձաքննության մոդելը, իսկ 2025թ.-ին զարգացնել լիազոր մարմնի կարողությունները: Սա նշանակում է, որ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը գործնականում կարող է իրականացվել լավագույն դեպքում 2026թ.-ից հետո, այն դեպքում, երբ նշված հարցով միջազգային փորձի ուսումնասիրություն արդեն իսկ առկա է, որը իրականացվել է ՄԱՉԾ-ի հայաստանյան գրասենյակի կողմից և ներկայացվել ԿԿԴ-ին: Բացի այդ, համառոտ տեղեկանք է կազմվել նաև ԹԻՉԿ-ի կողմից և 2021 թվականին կազմակերպվել քննարկում նշված թեմայով, ինչպես նաև ներկայացվել է միջազգային փորձի վերլուծական կյուրթ:⁸

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի «Իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն ազդեցության գնահատում» ուղղության ներքո նկարագրված ինդիքը վերաշարադրել «իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն» եզրույթով և ներառել «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության ներքո:
- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.7 կետում, որպես վերջնարդյունք նախատեսել իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության եզրակացությունների գործնականում առկայության ցուցանիշ:

⁸ Regional Cooperation Council, Anti-Corruption Assessment of Laws (“Corruption Proofing”): Comparative Study and Methodology, https://www.rai-see.org/php_sets/uploads/2020/11/Comparative_Study-Methodology_on_Anti-corruption_Assessment_of_Laws.pdf

14. «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության վերնագրում «և բարեվարքության ամրապնդման» բառերն իրենց բովանդակությամբ կրկնվում են հաջորդ` «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» ուղղության վերնագրում: Բացի այդ, նշված ուղղության «հանրային ոլորտ» եզրույթը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին, մինչդեռ, ռազմավարության նախագծի նշված ուղղության ներքո հասկացվում է, որ կոռուպցիայի կանխարգելման խնդիրները պետք է դիտարկվեն ավելի լայն շրջանակով, որը վերաբերելի պետք է լինի պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև հանրային նշանակության մասնավոր կազմակերպություններին: Այս իմաստով, անհրաժեշտ է բացառել տարընթերցումների հնարավորությունը:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծում հստակեցնել «հանրային ոլորտ» եզրույթի շրջանակը, ըստ այդմ` վերաշարադրել վերնագիրը,
- «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության վերնագրից հանել «և բարեվարքության ամրապնդման» բառերը:

15. «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության ներքո, դիտարկված է կոռուպցիայի կանխարգելման օրենսդրության միասնականացման խնդիրը, որի շրջանակներում նախագծի գործողությունների ծրագրի 1.8 կետով նախատեսվում է 2024 թվականին իրականացնել «Օրենսդրական ակտի մշակման համար կատարվել են անհրաժեշտ ուսումնասիրություններ» գործողությունը: Տպավորություն է, որ դաշտում առկա չեն ուսումնասիրություններ, մինչդեռ ՀԿ-ների կողմից կատարված ուսումնասիրությունները փաստորեն անտեսվում են: Մասնավորապես` առկա է ԹԻՀԿ ուսումնասիրություն⁹, որտեղ մանրամասն ներկայացվել են հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներում անհամապատասխանությունները, դրանց վերացմանը միտված հաջողված միջազգային փորձը և վերջինիս հիման վրա` օրենսդրական առաջարկությունները:

Առաջարկություն

- «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի նախագծի մշակումից զատ, գործողությունների ծրագրում նախատեսել նաև օրենքից բխող իրավական և օրենսդրական ակտերի մշակման վերաբերյալ գործողություն` հաշվի առնելով արդեն իսկ առկա վերլուծությունները:

⁹ «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում», <https://transparency.am/hy/publication/256>, «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում» <https://transparency.am/hy/publication/244> և այլն

16. Նույն ուղղության ներքո նախանշված է «պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակման» գործիքի ներդրումը: Վերջինիս մշակման և կիրառման աշխատանքները դեռևս նախատեսված են եղել 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով, որով ակնկալվում էր ապահովել 13 պետական մարմիններում և 8 ՏԻՄ մարմիններում նման գործիքի կիրառում, որոնք սակայն չեն իրականացվել: Այդուհանդերձ, ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից դեռևս 2019 թվականին մշակված համանուն մեթոդաբանությունը հաշվի չի առնվել ԿԿՅ-ի կողմից և պատվիրվել է նոր մեթոդաբանության մշակման աշխատանք: Նոր մշակված մեթոդաբանության նախագիծը քննարկվել է փորձագիտական շրջանակի հետ, սակայն դրա ընդունման ու ներդրման հարցում առաջընթաց չկա:

Գործողությունների ծրագրի 1.9 կետով նախատեսվում է ապահովել կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակում պետական և ՏԻՄ մարմիններում, այդ թվում՝ ներառելով հակակոռուպցիոն բարեվարքության ծրագրերի մշակման օրենսդրական հիմքերը և ԿԿՅ-ին վերապահվելիք լիազորությունների շրջանակը:

Բացի այդ, օրենսդրական կարգավորումների ընդունումը նախատեսված է 2025 թվականին և գործնականում պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման մասին ոչ մի միջոցառում նախատեսված չէ, իսկ գնահատման արդյունքային ցուցիչներում առկա չէ գործնականում կիրառելի քանակական գնահատման ցուցանիշ: Մասնավորապես, պարզ չէ, թե մինչև 2026 թվականի ավարտը քանի պետական և ՏԻՄ մարմիններում կունանանք կիրարկված, կամ առնվազն՝ փորձարկված, մեթոդաբանություն և ինչ առաջընթաց կարձանագրվի պետական ու ՏԻՄ մարմինների կողմից նշված մեթոդաբանության կիրառման գործում: Արդյունքում, ստացվում է, որ մինչև 2026 թ. վերջ Հայաստանի հանրային ծառայությունում չենք ունենա գործնականում ձևավորված կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ, մինչդեռ միաժամանակ ռազմավարության նախագծով խնդիր ենք դնում համանման համակարգ կառուցել պետական մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների համար և համակարգման գործառույթները վերապահել ԿԿՅ-ին:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.9 կետում վերանայել «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ» ներդնելուն ուղղված քայլերի գնահատման ցուցիչները, այն հաշվով, որ դրանք արձանագրեն կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում գործնականում մշակված և կիրառված հակակոռուպցիոն ծրագրերի քանակական ցուցիչներ:
- Դիտարկել պետական մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման ու կառավարման համակարգի ձևավորման ժամանակավրեպության և աննպատակահարմարության հարցը՝ այն պայմաններում, երբ մարդկային ռեսուրսների կառավարման,

ծառայության և բարեվարքության տարրական բաղադրիչները նշված կառույցներում բացակայում են:

17. Նույն ուղղության ներքո դիտարկված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գույքի, եկամուտների, շահերի ու ծախսերի հայտարարագրման գործիքի կիրառման և հետագա կատարելագործման խնդիրները: Ռազմավարության նախագծի 1.10 և 1.11 կետերում առանձնացված են լուծման ենթակա 2 հիմնական խնդիրներ. առաջինը վերաբերում է «հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնմանը», իսկ երկրորդը՝ «հայտարարագրման էլեկտրոնային համակարգի զարգացմանը»: Հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնումը նախատեսվում է իրականացնել ի հաշիվ պետական և համայնքների մասնակցությամբ կազմակերպությունների ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Այդուհանդերձ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հայտարարագրման պարտականություն չունեն նաև հանրային ծառայության առավել ռիսկային ոլորտային պաշտոնյաները, ինչպիսիք են տեսչական և վերահսկողական մարմինների ծառայողները, պետական և համայնքային գնումների գործընթացի պատասխանատուները, լիցենզիաներ ու թույլտվություններ տրամադրող հանրային և համայնքային ծառայողները:

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգի զարգացման առկա խնդիրները արձանագրված են նաև ռազմավարության նախագծի «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիանալ համակարգը» բաժնում, ինչպես նաև գործողությունների ծրագրի 1.6 կետում:

Կոռուպցիայի կանխարգելման նոր գործիքակազմերի ներդրման մասով ռազմավարական խնդիր է նաև Հայաստանում համատարած հայտարարագրման համակարգին անցնելու պայմաններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների հայտարարագրման համակարգի հետ կրկնությունների ու հատումների, դրանից բխող ավելորդ վարչարարության վերացումը:

Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.11 կետում 2024 թվականի համար նախանշված են «Համընդհանուր հայտարարագրման ներդրման շրջանակներում ինքնաշխատ եղանակով ապահովվել է ՊԵԿ-ի և ԿԿՀ-ի էլեկտրոնային համակարգերում նույնական տվյալների փոխանակումը: Պետական մարմինների շտեմարաններում առկա տվյալները համապատասխանեցնել հայտարարագրման ենթակա տվյալներին: Հայտարարագրման ենթակա, սակայն շտեմարաններում բացակայող տվյալներն ինտեգրել շտեմարաններում» գործողությունները, որոնք տեխնիկապես կապահովեն ԿԿՀ-ի և ՊԵԿ-ի շտեմարանների փոխգործակցելիությունը: Այդուհանդերձ, շտեմարանների փոխգործելիության պայմաններում օրենսդրորեն չի վերանում պաշտոնատար անձի կամ ծառայողի կողմից գույքի, եկամուտների մասին տվյալների կրկնակի հայտարարագրման պարտականությունը: Այստեղ կարևոր խնդիրն այն է, որպեսզի գույքի, եկամուտների, շահերի ու ծախսերի հայտարարագրման ժամանակ տարանջատվեն գույքի և եկամուտների հայտարարագրերի մասով

պատասխանատու պետական մարմինների գործառույթներն ու պատասխանատվության շրջանակները: Իսկ շտեմարանների տվյալների փոխգործակցելիությունը՝ կօզնի վերլուծել հայտարարագրերը և ստուգել դրանցում ներառված տվյալների արժանահավատությունը:

Հայտարարագրման համակարգի մյուս կարևորագույն խնդիրը հայտարարագրման տվյալների միասնականացումն է՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերով պահանջվող տվյալների շրջանակի հստակեցումը, դրանց համալրումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի պահանջների խախտումները բացահայտող տվյալներով: Բացի այդ, կարևորվում է նաև հայտարարագրում գրանցվող տվյալների կրկնությունից խուսափելու հանգամանքը: Օրինակ, հիպոթեկային գործարքների գրանցումը կատարվում է հայտարարագրի երեք տարբեր բաժիններում: Մեկ այլ դեպքում, եկամուտները բաժնում արտացոլված են գույքի օտարման գործարքներից ստացված միջոցները կամ ստացված փոխառությունները, որոնք պետք է արձանագրվեն ստացված և մարված ֆինանսական միջոցներ բաժնում, կամ ստացված նվերներն արձանագրվում են գույքի, առանձին տեսակներում՝ տարբեր արժեքային շեմերով, այդ թվում եկամուտներ բաժնում՝ դրամական միջոցներով ստացված նվերների տեսքով:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.10 կետով օրենսդրական փոփոխությունների արդյունքում ապահովել հանրային ծառայության առավել ռիսկային ոլորտային պաշտոնյաների՝ տեսչական և վերահսկողական մարմինների, ծառայողների, պետական և համայնքային գնումների գործընթացի պատասխանատուների, լիցենզիաներ ու թույլտվություններ տրամադրող հանրային և համայնքային ծառայողների ներառումը գույքի, եկամուտների, շահերի ու ծախսերի հայտարարագրման համակարգում:
- Հայտարարագրման էլեկտրոնային համակարգերի խնդիրների լուծման տեսանկյունից, կրկնությունից խուսափելու համար ԿԿՀ էլեկտրոնային համակարգերի առանձին դրույթներն ամրագրել կոնկրետ կանխարգելման գործիքների դիտարկման ժամանակ, մասնավորապես, Գործողությունների ծրագրի 1.6 կետի «Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի խնդիրների շտկում», «Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի վերլուծական մոդուլի կառուցում» միջոցառումները ներառել գործողությունների ծրագրի 1.11 կետում:
- Համատարած հայտարարագրման համակարգին անցնելու պայմաններում ապահովել ՊԵԿ-ի և ԿԿՀ-ի կողմից հայտարարագրման պատասխանատվություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից գույքի և եկամուտների մասով կրկնակի հայտարարագրման պարտականության վերացումը՝ տարանջատելով ՊԵԿ-ի և ԿԿՀ-ի միջև հայտարարագրերի ընդունման գործառույթները: Մասնավորապես, որպես լուծման տարբերակ առաջարկվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների մասով՝ ՊԵԿ-ին վերապահել եկամուտների հայտարարագրերի ընդունումը, իսկ ԿԿՀ-ին գույքի, ծախսերի և շահերի հայտարարագրումը:

- Գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրում հստակեցնել հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը՝ հայտարարագրի տարբեր հատվածներից խմբավորելով նույնաբովանդակ տվյալները՝ նույն գործարքի վերաբերյալ առանձին գրանցումներում և գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի բաժիններում:

18. «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության 6-րդ պարբերության մեջ նշված է, որ «Կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն նպատակներից է ազնիվ, բարեխիղճ և գործունյա հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կերպարի ստեղծումը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը»: Ռազմավարության նախագծում կոռուպցիայի կանխարգելումը արդեն իսկ դիտարկված է որպես նպատակ: Այս ենթատեքստում «ազնիվ, բարեխիղճ և գործունյա հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կերպարի ստեղծումը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը» նույնպես ձևակերպված է որպես նպատակ: Նման պայմաններում «կանխարգելման նպատակի», «կանխարգելման միջոցի» և «կանխարգելման ուղղություն» եզրույթների միջև առաջացել է շփոթ: Նույն բաժնում քաղաքական կոռուպցիայի մասով կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ ԿԿԴ-ի վերահսկողությունը ներկայացված է որպես երաշխիք, հայտարարագրման մասով՝ որպես գործիք, կոռուպցիոն ռիսկերի գնահատումը՝ որպես համակարգային կոռուպցիայի վրա ազդող համակարգ: Նման տարաբնույթ որակումների/եզրույթների («նպատակ», «երաշխիք», «գործիք») գործածությունը հնարավորություն չի տալիս ունենալու հստակ սահմանված նպատակ, ուղղություններ, ինդիկատորներ, դրանց լուծման ուղիներ, ինչպես նաև՝ գնահատման ցուցանիշներ և ակնկալվող արդյունքներ:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծում հստակեցնել եզրույթները: Կոռուպցիայի կանխարգելումը ձևակերպել որպես միջոց, իսկ նպատակների շարքում առանձնացնել՝ ազնիվ, բարեխիղճ և գործունյա հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կերպարի ստեղծումը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը:

19. Ռազմավարության նախագծի «Կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների» ուղղության ներքո դիտարկված է նաև բարեվարքության ուսումնասիրության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը: Ըստ գործողությունների ծրագրի 1.12-1.15 միջոցառումները վկայում են, որ բարեվարքության ստուգումների կամ ուսումնասիրությունների համակարգը վերաբերելի է լինելու միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և միակ իրականացնողը հանդիսանալու է ԿԿԴ-ն: Մինչդեռ ռազմավարության նախագծով չի նախատեսվում հանրային ծառայողների համար բարեվարքության ստուգման մեխանիզմների գործարկում:

Հանրային ծառայողների, մասնավորապես քաղաքացիական ծառայողների, համար բարեվարքության ստուգման գործընթացների իրականացման վերաբերյալ լուծումներ

են քննարկվել ԹԻՅԿ-ի կողմից 2022 թվականին իրականացված «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում»¹⁰ զեկույցում, որում առաջարկվել է բարեվարքության ուսումնասիրությունների գործիքներ կիրառել ոչ միայն քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքների համայնքի գործընթացի թեստավորման ու հարցազրույցների փուլերում գործնական և իրավիճակային խնդիրների միջոցով, այլև կատարողականի գնահատման, ատեստավորման ու վերապատրաստման փուլերում, կոմպետենցիաների գնահատման գործընթացներում:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.12-րդ կետը համալրել հանրային ծառայողների բարեվարքության ստուգման (ուսումնասիրությունների) իրականացման միջոցառումներով:
- Հանրային ծառայության բոլոր պաշտոնյաների ու ծառայության տեսակների համար օրենսդրորեն սահմանել բարեվարքության ստուգման իրավասու/պատասխանատու մարմիններ և կառուցվածքային ստորաբաժանումներ, բարեվարքության ստուգման (ուսումնասիրությունների) իրականացման կարգեր, մեթոդական ուղեցույցներ մշակելու պահանջ:
- Հանրային ծառայողների թափուր հաստիքների համայնքային և մրցույթային և առաջխաղացման գործընթացներում սահմանել թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար թեստային առաջադրանքների և հարցաշարի կիրառման պահանջ, թափուր հաստիքների համայնքային հարցազրույցի գնահատման գործընթացում թեկնածուների բարեվարքության կոմպետենցիաների գնահատման չափորոշիչներ, իրավիճակային խնդիրների կիրառման պահանջ, մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների գնահատման ձևաթղթերում բարեվարքությանը վերաբերելի ցուցիչներ:
- Հանրային ծառայողների կատարողականի գնահատման (ատեստավորման) գործընթացներում անձնային և (կամ) կառավարչական հմտությունների շարքում սահմանել՝ հանրային ծառայողների բարեվարքության կոմպետենցիաների գնահատման պահանջ, հանրային ծառայողի բարեվարքության ցուցիչներ և գնահատման չափորոշիչներ:
- Նախագծի 1.13-րդ գործողությամբ նախատեսում է տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ստուգումը (շրջանակը, մեխանիզմները): Այս կետի ներքո կարևոր է հստակեցնել, թե որ պաշտոններն է թիրախավորում տվյալ ծրագիրը:

20. «Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում» ուղղության կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության մեծացում և կատարելագործում խնդրի մասով գործողությունների ծրագրի 1.17-րդ

¹⁰ <https://www.transparency.am/hy/publication/pdf/276/9667>

կետով նախատեսվում է միջազգային փորձի ուսումնասիրություն և օրենսդրական ակտերի նախագծերի մշակում: Այդուհանդերձ, կոնկրետ լուծումներ չի առաջարկվում, թե ինչ կառուցակարգերի մասին է խոսքը, ինչ օրենսդրական ակտեր պետք է մշակվեն կամ գործողներից որոնց մասով պետք է լրացումներ կամ փոփոխություններ իրականացվեն:

Բացի այդ, ռազմավարության նախագծի «Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» բաժնում նշված է, որ 2024 թվականից ուժի մեջ է մտնելու «...նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացման» գործառույթը ԿԿՀ-ին փոխանցման օրենսդրական պահանջը: Նշված նոր գործառույթի իրականացման հանգամանքներով պայմանավորված հիմնավորվում է ԿԿՀ-ին լրացուցիչ հաստիքների տրամադրման խնդիրը: Մինչդեռ, Գործողությունների ծրագրի 1.17 կետում դրանից բխող գործողություններ նախատեսված չեն և քննարկված չէ համապատասխան կառուցակարգերի մշակման հարցը:

Առաջարկություն

- Չնարավորինս հստակեցնել ռազմավարության նախագծի կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության մեծացում և կատարելագործում հատվածի շարադրանքը՝ հաշվի առնելով ԿԿՀ-ին 2024 թվականից վերապահվող կուսակցությունների/ դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների նկատմամբ վերահսկողության նոր գործառույթներով պայմանավորված գործողությունները:

21. «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» ուղղության ներքո Ռազմավարության նախագծում քննարկված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության համակարգը կազմող հիմնական բաղադրիչների՝ վարքագծի կանոնների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների պահանջների պահպանման գործիքակազմերի ու կառուցակարգերի առկայության և դրանց կիրառման հիմնախնդիրները: Պետական և ՏԻՄ մարմիններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարքագծի կանոնագրքերի և դրանց կիրարկման կառուցակարգերի մասով ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.18-րդ կետում 2024 թվականի կատարողականի թիրախներում նախանշված միջոցառումներից մեծ մասի մշակումը արդեն իսկ նախատեսված է «Չանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որոնց մշակման պատասխանատուն ԿԿՀ-ն է: Բացի այդ, «Չանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը» արդեն մշակված ու հաստատված է: «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի» նախագիծը ԿԿՀ-ի կողմից դրված է շրջանառության մեջ:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.18 կետից հանել՝ «Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի մշակման» և «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրի» մշակման միջոցառումները:

22. Նույն ուղղության շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման և այլ սահմանափակումների արդյունավետ գործադրման, վերահսկման մեխանիզմների կատարելագործման հիմնախնդիրների մասով գործող կառուցակարգերի ու ընթացակարգերի անկատարության, առկա խնդիրների ու դրանց լուծման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ ռազմավարության նախագծում բացակայում է որևէ բացատրություն կամ նկարագրություն: Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.19 կետում շահերի բախման կատարելագործման մասով ընդամենը նախատեսվում է «շահերի բախման նոր սահմանմանը համահունչ վերանայել հանրային ծառայության ոլորտային օրենսդրությունը»: Մինչդեռ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների մասով բացակայում են շահերի բախման բացահայտման և կառավարման գործիքակազմերն ու դրանց կիրառման կառուցակարգերը: Վերջիններիս մասով հիմնական խնդիրներն ու դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ԹԻՀԿ-ի կողմից 2022 թվականին մշակված «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում» ուսումնասիրության մեջ:¹¹ Միաժամանակ, ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների պլանի «Հայաստանի հակակոռուպցիոն բարեփոխումներ» 5-րդ մոնիտորինգային զեկույցի «շահերի բախումը և հայտարարագրման համակարգը» բաժնի գնահատականները և հանձնարարականները վկայում են շահերի բախման բացահայտման ու կառավարման գործիքակազմերի ու կառուցակարգերի օրենսդրական կարգավորումների անկատարությունը և գործնականում դրանց կիրառման բացակայությունը:

Առաջարկություն

Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.19-րդ կետը համալրել հետևյալ միջոցառումներով.

- Օրենսդրությամբ կանոնակարգել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների իրավիճակային շահերի բախման առկայության վերաբերյալ բանավոր և գրավոր հայտարարությունների տրամադրման եղանակները, ժամկետները, դրանց արձանագրման և գրանցման (ռեեստր) կարգը, պատասխանատու մարմինները (բարեվարքության հարցերով կազմակերպիչներ),

¹¹ <https://transparency.am/hy/publication/256>.

շահերի բախման ռեեստրի ձևավորման պահանջները, ռեեստրից տեղեկատվության հրապարակման պայմանները,

- Նախագծել և մշակել շահերի բախման հայտարարությունների գրանցման ռեեստրի էլեկտրոնային համակարգ՝ այն փոխկապակցել ԿԿՀ-ի հայտարարագրման և ՀՀ Վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակի հանրային պաշտոն գրադեցնող անձանց ու ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգերին,
- ԿԿՀ-ին, պետական և ՏԻՄ մարմինների բարեվարձության հարցերով կազմակերպիչներին վերապահել լիազորություն՝ վերլուծելու և ստուգելու իրավիճակային շահերի բախման հայտարարություններում ներառված տեղեկատվությունը և դրանց հիման վրա խորհրդատվություն և առաջարկություններ ներկայացնել համապատասխան պետական կամ ՏԻՄ մարմնի ղեկավարին և պաշտոնատար անձին,
- Հիմք ընդունելով ՏՀԶԿ-ի «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման հանձնարարականների» պահանջները, օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոն գրադեցնող անձանց և հանրային ծառայողների իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքակազմեր և դրանց կիրառման ընթացակարգերը,
- Շահերի բախման կառավարման գործընթացում կիրառել մարդկային ռեսուրսների կառավարման գործիքների՝ փոխատեղում (ռոտացիա), կադրերի ռեզերվ փոխադրում, գործուղում, լիազորությունների վերաբաշխում, պաշտոնի անձնագրերում փոփոխությունների իրականացում և այլ կարգավորումները,
- Օրենսդրությամբ սահմանել «Շահերի բախման բացահայտման և կառավարման» ուղեցույցի մշակման պահանջ, որում ներկայացնել շահերի բախման սահմանումը, հանրային պաշտոն գրադեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման դեպքերում շահերի բախման բացահայտման, կառավարման գործիքակազմերը և դրանց կիրառման եղանակները, մեկնաբանությունները՝ հիմնավորելով պրակտիկայից ձևավորված օրինակներով,
- Մշակել և կազմակերպել հանրային պաշտոն գրադեցնող անձանց և ծառայողների «շահերի բախման բացահայտման և կառավարման» թեմայով վերապատրաստման ծրագիր, մասնագիտական դասընթացներ՝ ԿԿՀ անձնակազմի, ԱԺ պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամների, բարեվարձության հարցերով կազմակերպիչների, վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց, ինչպես նաև ընդհանուր ճանաչողական դասընթացներ՝ հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց առանձին խմբերի համար:

23. Նույն ուղղության «Նվերների ընդունման սահմանափակումների» հիմնախնդիրների մասով ռազմավարության նախագծում նշված է, որ «նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը լրիվությամբ ամրապնդված չեն, նվերների հաշվառման կառուցակարգերը թերի են, դեռևս ձևավորված չէ նվերների ռեեստրը, սահմանված չեն պետության և համայնքի սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման հետ կապված կարգավորումներ, որևէ պետական մարմնի վերապահված չէ նվերները հաշվառելու լիազորություն, իսկ պետության սեփականությունը դարձող նվերների տնօրինման լիազորությունը, ըստ էության,

վերապահված է միայն Պետական գույքի կառավարման կոմիտեին, ինչը խնդրահարույց է և իրավակիրառ պրակտիկայում մի շարք խնդիրներ կարող է առաջացնել»:

Նվերների ընդունման սահմանափակման կանոնակարգման մասով օրենսդրական վերջին փոփոխությունը կատարվել է 2022 թվականի դեկտեմբերին, որով «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխություններով նախատեսվում է ձևավորել օրենքից բխող թվարկված ընթացակարգերն ու կաուցակարգերը, ձևավորել նվերների ռեեստրը, այդ թվում՝ էլեկտրոնային: Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.20 կետում նախատեսվում է «Սահմանել նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների ռեեստրի վարման, դրա լրացման ու տվյալների հրապարակման կարգերը, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգավորումները»: Նշված կարգերի մշակումը սահմանված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և ռազմավարական փոփոխություններ չի պահանջվում:

Նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման և դրա հետ շաղկապված մյուս գործողությունների մասով միջոցառումները նախանշված են նաև ՀՀ «Բաց կառավարման գործընկերության» (ԲԿԳ) 5-րդ գործողությունների ծրագրի 7-րդ հանձնառությունում:¹²

Ինչ վերաբերում է ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.20 կետում 2024 թվականի 1-ին կիսամյակում մշակվելիք օրենսդրական փոփոխություններին («Մշակվել է իրավական ակտերի նախագծեր, որոնցով 1. Նախատեսվել են պետության սեփականությունը դարձող նվերների տնօրինման կանխատեսելի, հստակ և արդյունավետ կարգավորումներ, 2. Արարողակարգային նվերները հաշվառելու և տնօրինելու լիազորությունն առանձին դեպքերում վերապահվել է Պետական արարողակարգային ծառայությանը, 3. Սահմանվել է պետական սեփականություն դարձող արարողակարգային նվերները տվյալ պետական մարմնում պահելու օգտագործելու հնարավորություն, 4. Մշակութային արժեք ներկայացնող արարողակարգային նվերները թույլատրվել է հանձնել թանգարաններին, 5. Հստակեցվել են առանձին տեսակի արարողակարգային նվերների (շուտ փչացող գույք, կենդանիներ եւ այլն) տնօրինման եղանակները, 6. Սահմանվելու է արարողակարգային նվերներն ըստ անհրաժեշտության իրացնելու եւ հասույթը բարեգործության ուղղելու հնարավորություն, 7. Օրենքով սահմանված դեպքերում որպես պարզևատրում տրվող թանկարժեք նվերներն ու զենքը ներառվել են թույլատրելի նվերների շրջանակում, 8. Նախատեսվել են ոչ թույլատրելի նվերները «Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից իրացնելու և ստացված հասույթի տնօրինման եղանակները»), ապա անհրաժեշտ է նշել, որ պահանջվող օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը ՀՀ ԲԿԳ-ի 5-րդ գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և հանրային քննարկման է ներկայացված «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում

¹² <https://ogp.gov.am/hy/commitments/33>

կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը», որով կարգավորվում են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ հիմքերով պետական սեփականություն դարձած գույքի տնօրինման հետ կապված կարգավորումները՝ նախատեսելով նվերները ծառայողի կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը թողնելու, առանձին դեպքերում՝ պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելու, հրապարակային սակարկություններով կամ բարեգործություն իրականացնող սուբյեկտներին նվիրաբերելու եղանակով իրացնելու, շուտ փչացող գույքի իրացման եղանակների վերաբերյալ կարգավորումներ:¹³

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծից և գործողությունների ծրագրի 1.20-րդ կետից հանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 4-րդ մասով սահմանված և ԿԿՀ-ի կողմից մշակման ենթակա ընթացակարգերն ու կառուցակարգերի նախագծերի մշակման պահանջը:
- Գործողությունների ծրագրի 1.20-րդ կետից հանել նաև 2024 թվականի համար որպես կատարողականի թիրախ նախատեսված «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերով արդեն իսկ լուծում ստացած հարցադրումները կամ միջոցառումները:
- Կրկնությունից խուսափելու համար՝ քննարկել նաև գործողությունների ծրագրի 1.20 կետից նվերների ռեեստրի մշակման միջոցառման հանելու հարցը:

24. Նույն ուղղության ներքո դիտարկված են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության և այլ սահմանափակումների պահանջների կիրառման կառուցակարգերը և դրանց բացահայտման գործիքները: Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.22 - 1.24 կետերով նախատեսված են այլ սահմանափակումների պահանջների կառուցակարգերի մշակման և դրանց գործիքակազմերի բացահայտման միջոցառումներ՝ «լրբբիստական գործունեության կարգավորման վերաբերյալ ուսումնասիրության իրականացում» և «կյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործում»: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոնյաների ու ծառայողների համար սահմանված այլ սահմանափակումների մյուս տեսակների կարգավորումների մասով ընդ որում ռազմավարության նախագծում և ընդ էլ գործողությունների ծրագրում ոչ մի միջոցառում նախանշված չէ:

Առաջարկություն

¹³ <https://www.e-draft.am/projects/5999>

Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.22-1.24 կետերը համալրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների այլ սահմանափակումներին վերաբերելի հետևյալ միջոցառումներով՝

- «Իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար» սահմանափակման պահանջների արժանահավատության ստուգման կամ վերահսկման տեսանկյունից իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանում ներառել «կուսակցական մարմինների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության ու անդամակցության վերաբերյալ» տվյալները:
- «Հոնորար ստանալ պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար» սահմանափակումը դիտարկել որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի «այլ վճարովի աշխատանք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքներից» անհամատեղելիության պահանջի մասնավոր դեպք կամ պայման:
- «Համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ» սահմանափակման արժանահավատության ստուգման կամ վերահսկման նպատակով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու էլեկտրոնային համակարգում ներառել «մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ՀԾՀ-ը», ինչպես նաև՝ «տվյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի անմիջական ղեկավարի կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող պաշտոնյայի վերաբերյալ՝ պաշտոնի, կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, պաշտոնյայի Ա.Ա.Հ-ը» տվյալները:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգն առցանց հասանելիություն ապահովել ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ԶԿԱԳ) էլեկտրոնային շտեմարանին:
- Օրենսդրությամբ վերանայել հետագա աշխատանքային գործունեության սահմանափակման սահմանումը՝ հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների առանձին խմբերի գործունեության ոլորտները, այդ ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված աշխատանքային գործունեության սառեցման ժամանակահատվածի տևողությունը, որոշում կայացնողների շրջանակը, սահմանափակման պահանջների նկատմամբ վերահսկողության գործիքները, դրանց կիրառման պայմանները, մասնավոր ոլորտում հետագա գործունեությանը վերաբերելի այլ հարցերը:

25. «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» ուղղության ներքո քննարկված է նաև պետական և համայնքային մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության համակարգի ներդրման և զարգացման հիմնախնդիրները, գործողությունների ծրագրում պետական և համայնքային

մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության համակարգի բաղադրիչների ներդրման մասով ոչ մի միջոցառում նախանշված չէ: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել այն պետական մարմին, որը պետք է ապահովի վերոնշյալ կազմակերպություններում բարեվարքության համակարգի պահանջների կիրարկումը: Հստակեցված չէ ԿԿՀ-ի կամ այլ պետական մարմինների դերակատարումը նշված կառույցներում բարեվարքության ինստիտուտի ներդրման համակարգողի գործառույթների մասով:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրում նախատեսել ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության բաղադրիչների ներդրման միջոցառումներ և հստակեցնել նշված կազմակերպություններում բարեվարքության պահանջների պահպանումը ապահովող լիազոր մարմնի կամ մարմինների հարցը:

26. Նույն ուղղության ներքո որպես ռազմավարական խնդիր դիտարկված է բարեվարքության պահանջների պահպանման համար պատասխանատվության միջոցների կիրառման հարցը, դրանց կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը: Ռազմավարության նախագծում նշված է, որ «...չնայած սահմանվել են վարքագծի տիպային կանոնները, սակայն դրանց խախտումների համար պատասխանատվության միասնական նորմեր սահմանված չեն, յուրաքանչյուր մարմին ազատ է կոնկրետ խախտման համար պատասխանատվության միջոց սահմանել: Այսինքն՝ գործնականում ձևավորվում է այնպիսի իրավիճակ, երբ նույն տեսակի խախտման համար տարբեր մարմիններ կարող են կիրառել պատասխանատվության տարբեր միջոցներ»:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքները հանրային պաշտոնյաների ու ծառայողների վարքագծի տիպային կանոնների համար պատասխանատվության միջոցներ սահմանելու պահանջ չեն նախատեսել: Պատասխանատվության միջոցներ նախատեսված են վարքագծի կոնկրետ կանոնների խախտումների համար: Ինչ վերաբերում է նույնաբովանդակ վարքագծի կանոնի խախտման համար հանրային ծառայության առանձին տեսակների ոլորտային օրենքներով պատասխանատվության տարբեր տեսակների ու աստիճանների սահմանման հնարավորությանը, ապա նման մոտեցումը տրամաբանական է և հիմնավորված՝ պայմանավորված տվյալ ծառայության առանձնահատկություններով, ծառայողի պատասխանատվության շրջանակով և ռեժիմով: Նմանատիպ մոտեցում արձանագրված է դատավորների, դատախազների, քննիչների ու հանրային մյուս պաշտոնյաների մասով բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության տարբեր աստիճանի և միջոցների կիրառման պայմաններում: Այստեղ բոլոր հանրային պաշտոնյաներին ու ծառայողներին «նույն սանրով» սանրելու մոտեցումը հիմնավորված չէ:

Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.25 և 1.26 կետերով նախատեսված միջոցառումները բավարար չեն բարեվարքության պահանջների խախտումների միասնական համակարգ ձևավորելու համար: Մասնավորապես, բացակայում են ինքնավար պաշտոնների խմբի պաշտոնատար անձանց մասով

պատասխանատվության միջոցների կիրառման գործիքակազմերն ու կառուցակարգերը: Բարեվարքության պահանջների խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցների տեսակների մասով՝ հանրային ծառայության առանձին տեսակների ոլորտային օրենքներով կարգավորումների խնդիրը ռազմավարության նախագծում բացակայում է: Իսկ հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և ծառայողների այլ սահմանափակումների մասով կարգապահական պատասխանատվության միջոցներից վարչական, իսկ հանցագործությունների տարրեր պարունակող դեպքերում՝ քրեական պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորությունների մասին նույնպես ռազմավարական մոտեցումները բացակայում են:

Առաջարկություն

Ելնելով վերոնշյալից ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.25 և 1.26 կետերում նախատեսված միջոցառումներում ներառել՝

- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների պահանջների խախտումների համար սահմանել խստացված պատասխանատվության միջոցներ՝ համատարած կարգապահական պատասխանատվության միջոցներից անցում կատարելով վարչական, իսկ առանձին դեպքերում՝ քրեական պատասխանատվության միջոցների կիրառմանը:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենսդրորեն սահմանել վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պայմանների խախտումների համար կարգապահական և վարչական պատասխանատվության կոնկրետ միջոցներ խախտման յուրաքանչյուր տեսակի ու պայմանների համար և մշակել դրանց կիրառման գործիքակազմերը:
- Հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվության միջոցներին զուգահեռ սահմանել հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող վարքագծի կանոնները, անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում՝ կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ և մշակել դրանց կիրառման գործիքակազմերը:
- Կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ սահմանել պետական և ՏԻՄ մարմինների ղեկավարների, վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց, հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների անդամների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների և բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ բարեվարքության պահանջների պահպանման մասով իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կամ պատշաճ կատարման համար և մշակել դրանց կիրառման գործիքակազմերը:
- Օրենսդրորեն սահմանել շահերի բախման իրավիճակներում կնքված պայմանագրերը, տրված թույլտվությունները, կայացրած որոշումները առոչինչ

ճանաչելու և դրանց արդյունքում ձեռքբերված միջոցները բռնագանձելու գործիքակազմերը, որը հնարավորություն կտա էապես փոխել բարեվարքության պահանջների պահպանման նկատմամբ հանրային պաշտոնյաների ու ծառայողների վերաբերմունքը:

27. «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» ուղղության գործողությունների ծրագրի 1.27 կետում նախատեսված է «Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության համար հաշվետվողականության միասնական մեխանիզմների ներդրման ուղղված քայլեր»: Մինչդեռ, ռազմավարության նախագծի համապատասխան բաժնում պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության համար հաշվետվողականության միասնական մեխանիզմների մասին ոչ մի դրույթ արձանագրված չի կամ խնդիրներ բացահայտված չեն: Ընդ որում, բացակայում են «բարեվարքության համար հաշվետվողականության միասնական մեխանիզմների ներդրման» հստակ պատկերացումներն ու բովանդակությունը: Ըստ այդմ, գործողությունների ծրագրի 1.27 կետում նույն կերպ անորոշ են «Իրականացվել է ուսումնասիրություն...», «Ուսումնասիրության հիման վրա, ըստ անհրաժեշտության, մշակվել են իրավական ակտերի նախագծեր», «Նախագծերը ներկայացվել են ՀՀ Կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել» կատարողական թիրախները:

Առաջարկություն

- Հստակեցնել ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 1.27 կետով սահմանված գործողության բովանդակությունը և համապատասխան խնդիրներն արձանագրել ռազմավարության նախագծի «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» ուղղության ներքո:

ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱՉԴՈՒՄ

28. «Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում» ռազմավարական ուղղության ներքո կարևորվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ և գործառնության անկախության երաշխիքների ամրապնդման, նրա գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման խնդիրը: Տվյալ ռազմավարական ուղղությունը լիարժեքորեն չի արտացոլում այն բոլոր խնդիրները, որոնք վեր են հանվել իրավական և գործնական դաշտում:

Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակվում է վեց տարի ժամկետով, մինևնույն ժամանակ օրենքը սահմանում է նույն անձին երկու անգամ անընդմեջ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակելու հնարավորություն: Մինչդեռ, Կոմիտեի նախագահի վերանշանակվելու հնարավորությունը կարող է նշանակող մարմնի կողմից Կոմիտեի նախագահի անկախության սահմանափակման ռիսկեր պարունակել՝ ազդելով նաև վերջինիս անկաշկանդ գործելու հնարավորությունների վրա: Վերընտրվելու կամ վերանշանակվելու արգելք նախատեսող սկզբունքն առավելապես կիրառվում է անկախության բարձր չափանիշներ ենթադրող պետական պաշտոնատար անձանց դեպքում և հանդիսանում է նրանց անկախ և

անաչառ գործունեության ապահովման կարևոր երաշխիք: Ուստի, անհրաժեշտ է վերանայել երկու անգամ անընդմեջ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում վերանշանակվելու հնարավորության վերաբերյալ կարգավորումը՝ զուգահեռ երկարացնելով կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը, օրինակ՝ մինչև 7 տարի:

Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում վարչապետը՝ մրցույթում հաղթող ճանաչված հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածության վերաբերյալ Կոմիտեի նախագահի առաջարկության հիման վրա: Նշված ընթացակարգը չի բխում հակակոռուպցիոն կոմիտեի անկախության, Կոմիտեի նախագահի ինքնուրույնության ապահովման սկզբունքներից: Հաշվի առնելով նախագահի տեղակալների գործառնությունները և դերը Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման բնագավառում՝ նրանց նշանակման և պաշտոնից ազատման գործընթացները պետք է վերապահված լինեն Կոմիտեի նախագահին՝ բացառելով գործադիր իշխանության ցանկացած, ներառյալ ընթացակարգային բնույթի միջամտություն:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի նշանակման գործընթացը՝ կոմիտեի ինստիտուցիոնալ և գործառնության անկախության երաշխիքներն ամրապնդելու նպատակով, ինչպես նաև սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանն ուղղված լրացուցիչ կարգավորումներ, քանի որ գործող կարգավորումները չեն նախատեսում ներկայացվող հաշվետվությունների բովանդակությանը ներկայացվող պահանջները և ներառվող տեղեկությունները: Դրան զուգահեռ, անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների զարգացման ուղղությամբ:

Առաջարկություն

Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրի 2.1 և 2.2 կետերում ավելացնել հետևյալ գործողությունները՝

- Վերանայել երկու անգամ անընդմեջ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակվելու հնարավորության վերաբերյալ կարգավորումը՝ զուգահեռ երկարացնելով կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը:
- Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների նշանակման և ազատման կարգը՝ բացառելով այս գործընթացում գործադիր իշխանության մասնակցությունը և վերապահելով այս լիազորությունը կոմիտեի նախագահին:
- Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից Կառավարություն և Ազգային ժողով ներկայացվող՝ նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդման, ինչպես նաև կիսամյակային կտրվածքով Կոմիտեի գործունեության մասին հրապարակվող ամփոփ տեղեկատվության բովանդակությունը և առաջադրվող պահանջները:

- «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսել Կոմիտեի նախագահի կողմից միջանկյալ հաշվետվություն ներկայացնելու հնարավորություն, որի անհրաժեշտությունը կարող է պայմանավորված Ազգային ժողովում կոմիտեի նախագահի տարեկան հաղորդման քննարկման արդյունքներով:

29. Նախագծի 2.3-րդ գործողության ներքո նախատեսվում է իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեության թվայնացմանն ուղղված միջոցներ, որը կապվում է նաև ԿԿՀ աշխատանքային գործիքների թվայնացման և միասնական համակարգի ստեղծման գաղափարին: Տպավորություն է, որ այս երեք կառույցների կարիքները գնահատվում են մասնակի և նրանց համար առանձին լուծումներ են մշակվում, հետո համակցվում: Եվրոպական տարբեր պետություններում առկա է հենց նման կենտրոնացված էլեկտրոնային համակարգ:

Առաջարկություն

- Կիրառել համընդգրկուն մոտեցում, ԿԿՀ, հակակոռուպցիոն կոմիտեի և դատախազության առնչվող կարիքները գնահատել համատեղ և արդյունքում ստեղծել միասնական մեկ համակարգ ստեղծվի արդյունքում:

30. **Նախագծի Գործողություն 2.4.-ով նախատեսվում է անցկացնել** կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար: Քանի որ տարբեր միջազգային կառույցներ և դոնորներ աշխատում են տվյալ կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված պատրաստումներով, աշխատանքային ծրագրերի միջոցով, կարելի է ցուցաբերել ավելի ռազմավարական մոտեցում և գույքագրել կոնկրետ ուղղությունները, որով պետք է անցկացվեն վերապատրաստումները. օրինակ՝ փողերի լվացման, բարդ ֆինանսական հանցագործությունների քննություն, բաց աղբյուրների միջոցով որոնումներ:

Նույն գործողության որակական և քանակական ցուցանիշներով նախատեսված է «Վերապատրաստման/պատրաստման ծրագրերը ներդրվել և գործում են Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում»: Կարիք կա միասնականացնել ծրագրերը և իրականացնել համապատասխան մասնագիտացած կառույցի միջոցով, օրինակ՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայի:

Առաջարկություն

- Գույքագրել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի

բռնագանձման վարչության դատախազների վերապատրաստման կարիքները և կոնկրետ ուղղությունները:

- Իրավապահ մարմիններում նախատեսվող վերապատրաստման ծրագրերը նախատեսել ՀՀ Արդարադատության ակադեմիայի միջոցով:

31. «Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում» ռազմավարական ուղղության ներքո ներկայացված խնդիրներից մեկը անմիջականորեն չի առնչվում տվյալ ռազմավարական ուղղությանը և ավելի նպատակահարմար է այդ խնդիրը արտացոլել այլ ռազմավարական ուղղության ներքո: Այսպես, նշված խնդիրը ձևակերպել հետևյալ կերպ. «Բացի այդ, Հայաստանի կողմից միջազգային պարտավորությունների զգալի մասի ցածր գնահատականը պայմանավորված է վիճակագրական տվյալների բացակայությամբ, ինչը արտացոլված չէ ռազմավարության նախագծում: Մյուս կողմից, տվյալների անբավարար լինելը թույլ չի տալիս վերլուծելու մի շարք ոլորտներում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը: Ուստի, ռազմավարությամբ կարևոր խնդիր պետք է դիտարկվի կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի կառավարման և վերականգնման վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու վերլուծության համակարգի ստեղծումը: Արդյունավետ վիճակագրական համակարգի ներդրումը կբարձրացնի հակակոռուպցիոն կառույցների հաշվետվողականությունը և հանրային վստահությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության նկատմամբ:

Այս առնչությամբ անհրաժեշտություն է առաջանում ընդունել իրավական ակտ, որով կապահովվի գործերի կենտրոնացված, միասնական քաղաքականության հիման վրա վիճակագրության վարումը մեկ պատասխանատու մարմնի կողմից: Մասնավորապես, քրեական վարույթների մասով կարևորվում է վիճակագրության վարումը առնվազն ըստ՝

- հանցատեսակի,
- սուբյեկտի,
- հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների,
- հանցագործությամբ պատճառված վնասի,
- քրեական գործի հարուցումը մերժելու դեպքերի,
- քրեական գործերի քննության արդյունքների (նախաքննության փուլում գործի կասեցում, կարճում, արդարացման կամ մեղադրական դատավճռի կամ այլ որոշման կայացում)
- դատարանների կողմից կիրառված պատիժների տեսակների և չափի
- կոռուպցիոն հանցագործություններից ստացված եկամուտների,
- արգելադրված գույքերի, վերականգնված վնասների, բռնագանձված գույքի,
- գործերի տևողության,
- օտարերկրյա տարրի մասնակցությամբ կոռուպցիոն հանցագործություններով վերջնական մեղադրական դատավճիռների,

իսկ իրավաբանական անձանց մասով՝ ըստ

- կիրառված պատիժների տեսակների և չափերի,

- հանցագործությունը կանխելու համար ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը (due diligence (compliance)) որպես մեղմացնող հանգամանք կամ պատասխանատվությունից ազատելու միջոց կիրառելու:

Ի հավելումն հիմնական չափորոշիչների նախատեսվում է վարել վիճակագրություն նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիոն հանցագործությունների կատարման վերաբերյալ, այդ թվում.

- Բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կոռուպցիայի համար դատապարտված լինելու վերաբերյալ վիճակագրություն
- Բարձրաստիճան պաշտոնյաների դատապարտված լինելու վերաբերյալ վիճակագրություն, որոնք պաշտոնավարել են քննությունը սկսելիս
- Արտասահմանում կոռուպցիոն եկամուտների բռնագանձման վերաբերյալ վիճակագրություն

Վիճակագրության թափանցիկությունն ապահովելու նպատակով պետք է ապահովվի դրա՝ հանրության համար մատչելի հասանելիությունը»:

Առաջարկություն

Ելնելով վերոնշյալից ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրով նախատեսված 2.11 գործողությունը տեղափոխել այլ՝ խնդրո առարկային առնչվող ռազմավարական ուղղության ներքո՝ նշելով հետևյալը՝

- Ընդունել իրավական ակտ, որով կապահովվի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով հստակեցված ցուցիչներով և գործերի կենտրոնացված, միասնական քաղաքականության հիման վրա վիճակագրության վարումը մեկ պատասխանատու մարմնի կողմից: Վիճակագրության վարումը իրականացվում է ըստ բոլոր կարևոր ցուցիչների:

32. «Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում» ռազմավարական ուղղության ներքո ներկայացված խնդիրները չեն արտացոլում իրավական և գործնական ոլորտի վերհանված խնդիրները, ուստի անհրաժեշտ է ավելի մանրամասն ներկայացնել ոլորտին առնչվող հիմնախնդիրները: Մասնավորապես, Հակակոռուպցիոն դատարանի բոլոր ատյանների դատավորների թեկնածուներ են ընտրվել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն ստացած անձինք: Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ ՀՀ Նախագահի կողմից որոշ թեկնածուների վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին են ներկայացվել առարկություններ՝ առաջարկելով «... ըստ Էության ուսումնասիրման և քննարկման առարկա դարձնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվական եզրակացություններն ու կարծիքները...»:¹⁴ Նաև ՀՀ Նախագահի առարկության հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի կողմից մի շարք

¹⁴ Հետք, Դատավորների առաջխաղացումը խափանվել է. Նաիրա Ավետիսյանն ընդդեմ Կոռուպցիայի կանխարգելման ժողովի դիմել է դատարան, հասանելի է <https://hetq.am/hy/article/147462>

թեկնածուներ հանվել են դատավորների, ինչպես նաև դատավորների առաջխաղացման թեկնածուների ցանկից:¹⁵

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին գնահատականների մասում միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների շրջանակներում առանձին անդրադարձ չկա հակակոռուպցիոն դատարաններին, ըստ էության, դրանց առնչվող խնդիրները և լուծումները դիտարկելով ընդհանուր դատական համակարգի բարեփոխումների շրջանակում: Միջազգային կազմակերպությունների առաջարկություններում հակակոռուպցիոն դատարաններին ուղղակիորեն վերաբերելի խնդիրներից են վճռաբեկ դատարանի դատավորների «նշանակումները» ԱԺ կողմից, դատական գործերի սուբյեկտիվ եղանակով բաշխման պրակտիկան: Կարևոր խնդիր է ՏՀԶԿ այն արձանագրումը, որ իրավապահ մարմինները՝ ոստիկանություն, դատախազություն, խուսափում են քրեական վարույթ նախաձեռնել դատավորների նկատմամբ՝ վերջիններիս հետ հարաբերություններ չփչացնելու ակնկալիքով, որը հետագա դիտարկման ենթակա խնդիր է:

Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն դատարանի կայացմանն ու արդյունավետությանը, դրանց գնահատման համար անհրաժեշտ է մանրամասն դիտարկել համապատասխան կոռուպցիոն և ապօրինի գույքի վերադարձին առնչվող գործերի դատավարությունը և արդար դատաքննության սկզբունքների ապահովումը: Հարկ է ընդգծել, որ հակակոռուպցիոն դատարանների նկատմամբ ձևավորվել են բարձր ակնկալիքներ և ստանդարտներ, ուստի վերհանված խնդիրները այս դատարանների հեղինակագրվման էական վտանգ են ներկայացնում՝ հակակոռուպցիոն դատավորների քաղաքականացված լինելու, ինչպես նաև պետական համակարգի կոռումպացված պաշտոնյաների հետ հնարավոր կապերի վտանգների համատեքստում: Այս առումով խնդիր է առաջացնում նաև քաղաքական գործիչների, ինչպես նաև մարդու իրավունքների խախտումների պրակտիկայով աչքի ընկած դատավորների՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորներ նշանակվելու դեպքերը:

Առաջարկություն

Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրում ավելացնել հետևյալ գործողությունները՝

- Դատական իշխանության մարմիններում ընտրության/նշանակման գործընթացի և չափանիշների վերանայում՝ նվազեցնելով դրանց քաղաքականացված և կողմնակալ լինելու վտանգները, այդ թվում՝ նախատեսելով առնվազն վերջին երկու-երեք տարիների ընթացքում որևէ կուսակցության անդամ հանդիսանալու կամ քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվելու սահմանափակում:
- ԲԴԽ դատավոր և ոչ դատավոր անդամների՝ արժանիքների հիման վրա և թափանցիկ ընտրության ընթացակարգերի երաշխավորում:
- Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների, դատավորների առաջխաղացման ցուցակների կազմման, ինչպես նաև

¹⁵ Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-76-Ո-249 որոշում, հասանելի է <https://court.am/hy/decisions-single/1439>

դատարանների նախագահների պաշտոններում ընտրության գործընթացի թափանցիկության և որոշումների հիմնավորվածության և հրապարակայնության ապահովում:

- Դատական մարմիններում շահերի բախման սահմանման վերանայում, ինքնաբացարկի/բացարկի պրակտիկայի ընդլայնում:

33. «Հակակոռուպցիոն միջոցառումները դատական համակարգում» ռազմավարական ուղղության ներքո ներկայացված խնդիրներն ու գործողությունները խիստ թերի են և կրկնվող: Մասնավորապես, անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ են հենց նշված երեք գործողություններն ընտրվել ու ներառվել Հակակոռուպցիոն ռազմավարությունում ու գործողությունների ծրագրում, եթե Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նույնպես այդպիսի գործողություններ մասնակիորեն նախատեսված են: Մյուս կողմից առաջարկվող հակակոռուպցիոն միջոցառումները բավարար չեն դատական համակարգում կոռուպցիան կանխարգելելու համար:

Գործողությունների ծրագրի նախագծի 2.12-րդ գործողությամբ նախատեսում է արդիականացնել դատարաններում գործերի բաշխման էլեկտրոնային համակարգը, որն ամբողջությամբ կրկնում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի 10-րդ կետը, որով նախատեսվում է «Արդիականացնել դատարաններում գործող դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը, ինչպես նաև կատարելագործել դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգը»:¹⁶

Նախագծի 2.13-րդ գործողությամբ նախատեսվել է կատարելագործել դատավորների՝ այդ թվում հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների, գործունեության գնահատման կառուցակարգերը: Ընդ որում, դատավորների գնահատման կառուցակարգերի ներդրման ուղղությամբ ներկայումս արդեն իսկ աշխատանքներ են տարվում միջազգային ծրագրերի հետ համատեղ:

Նախագծի 2.14-րդ գործողությամբ նախատեսված է բարձրացնել դատարանների աշխատակազմերի և դատավորների աշխատակազմի վարձատրության չափը, ընդ որում՝ Դատաիրավական բարեփոխումների ռազմավարության 4-րդ կետով արդեն իսկ նախատեսված էր 2022թ. մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատավորների 2021 թվականին տարբեր դատական աստիճաններում (հակակոռուպցիոն առաջին աստիճան, վերաքննիչ) աշխատավարձերի բարձրացմանը: Կարծում ենք, որ պահանջվում է ցուցաբերել առավել համալիր մոտեցում և ամրագրել բոլոր աստիճանների դատավորների (սկսած առաջին աստիճանի դատավորներից, այլ ոչ հակառակը) և աշխատակազմի աշխատավարձերի համահունչ բարձրացում:

¹⁶ <https://www.moj.am/storage/uploads/tsraqir2022.pdf>

Ընդունելով այս միջոցառումների կարևորությունը, գտնում ենք, որ անընդունելի է մի ոլորտային ռազմավարությամբ նախատեսված գործողությունները միևնույն ժամանակ նախատեսել մեկ այլ ռազմավարական փաստաթղթում:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրում դատաիրավական ոլորտի ներկայացված խնդիրներն ու գործողությունները ավելի համապարփակ նախատեսել առնչվող փաստաթղթում՝ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ, զուգահեռաբար հեռացնելով դրանք, ինչպես նաև կրկնությունները հակակոռուպցիոն ռազմավարության նախագծից:

34. Ռազմավարության նախագծի 5-րդ էջում նշվում է. «2024 թվական հունվարի 1-ից կստեղծվի Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, որը իրականացնելու է նշյալ գործերով վերաքննության կարգով քննությունը: Նշված դատավորների բարեվարքությունը ևս օրենքով սահմանված կարգով ստուգվել է»: Նույն փաստաթղթի 38-րդ էջում նշվում է. «Միաժամանակ, 2024 թվականի հունվարի 1-ից կսկսի գործել Զակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը»: Տվյալ պնդումները անհասկանալի են, քանի որ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը արդեն իսկ գործում է:

Առաջարկություն

- Հանել կամ վերանայել ռազմավարության նախագծի 5-րդ և 38-րդ էջերում նշված պնդումները:

35. «Կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման կառուցակարգերի կատարելագործում» ռազմավարական ուղղության ներքո ներկայացված վիճակագրությունը նպատակահարմար է ներկայացնել ավելի հակիրճ՝ մեկ պարբերությամբ, չձանրաբեռնելով ռազմավարությունը մեկ էջ վիճակագրական տվյալներով, որոնք առավել ևս ներկայացված են 2019-2022թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի մոնիթորինգի և գնահատման եզրափակիչ զեկույցում:¹⁷

Բացի այդ, տվյալ ուղղության ներքո արտացոլված են միայն միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմների ընդլայնման և արդիականացման, միջազգային փոխօգնության մեխանիզմների կատարելագործման խնդիրները: Նախ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշվածից բացի իրականությունում առկա են բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք նույնպես պետք է իրենց արտացոլումը գտնեն ռազմավարության ծրագրում: Այսպես, պետք է կարևորել շահագրգիռ անձանց՝ արդար դատաքննության իրավունքի արդյունավետ երաշխիքների ընդլայնումը, այդ թվում՝ նրանց կողմից ապացույցների ձեռքբերման առումով հավելյալ երաշխիքների ապահովումն (օրինակ՝ տեղեկատվության հարցումներ իրականացնելիս

¹⁷ <https://www.moi.am/page/583>

ուսումնասիրություն իրականացնող իրավասու մարմնի օժանդակության ապահովումը) ու գույքի գնահատման փորձաքննությունների իրականացման ժամկետների կրճատումը:¹⁸

ՏՀԶԿ Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ 2022 թվականի զեկույցի դիտարկումներով ուշադրության է արժանացել կոռուպցիոն և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ապահովման ենթակա կամ բռնագանձված ակտիվների կառավարման թափանցիկությունն ու կանոնավոր աուդիտի իրականացումը (ցուցիչ 11.5.1)¹⁹: Նշվածի համատեքստում, հաշվի առնելով նաև քաղաքացիական հասարակության առաջարկությունները, կարևորվում է մի շարք կառուցակարգերի ներդրումը:

Քննարկման է ենթակա պետական (կամ հավատարմագրային) կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման նպատակահարմարությունը, որը կներառի տվյալներ առնվազն դրանց գտնվելու վայրի և արժեքի մասին և կիրապարակվի առցանց:

Բացի այդ, ներկայումս առկա չէ որևէ իրավական կարգավորում, որը հանրությանը թույլ կտա հետևել և մասնակցել կոռուպցիոն գործերով և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով հոգուտ պետության բռնագանձված գույքի կառավարման/ծախսման գործընթացին և գնահատել դրա արդյունավետությունը: Տարեկան պետական բյուջեն չի արտացոլում, թե մասնավորապես ինչ նպատակով են ծախսվելու կառավարության կողմից նշված ակտիվները: Նշվածի համատեքստում, հաշվի առնելով այն, որ անօրինական ճանապարհով ակտիվներ ձևավորելու արդյունքում տուժել է նաև լայն իմաստով հանրությունը՝ պետք է կարևորել նաև հասարակական ներգրավվածությունը վերադարձված ակտիվների կառավարման գործընթացին: Կարևոր է ստեղծել բռնագանձված գույքի կառավարման մասնակցային և հաշվետվողական մոդել, որը հնարավորություն կստեղծի դրա կառավարման վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնել նաև հանրության կարծիքը: Տվյալ ոլորտում տարբեր պետություններ արդեն կուտակել են հարուստ փորձ, որն արժանի ուսումնասիրության սույն ռազմավարության նպատակներով:²⁰

Վերոգրյալից բացի, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը (5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ) թույլ է տալիս հնարավորություն նախաձեռնված քրեական վարույթի հետ համընթաց՝ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին ապօրինի ծագում ունեցող գույք պատկանելու վերաբերյալ կասկածների առկայության պարագայում իրականացնել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրություն: Սկզբունքորեն քրեական վարույթի նախաձեռնման և

¹⁸ 2022թ. օրենսդրական փոփոխությամբ ուսումնասիրության առավելագույն ժամկետը երկարացվել է 2-ից 3 տարի՝ առաջին հերթին այն հիմնավորմամբ որ ժամկետը չի բավարարում գույքի վերաբերյալ նշանակված փորձաքննությունների երկարատևության պատճառով <https://www.e-draft.am/projects/3819/justification>

¹⁹ https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en

²⁰ <https://cifar.eu/wp-content/uploads/2022/09/Best-practices-and-challenges-in-the-management-of-recovered-assets.pdf>

իրականացման հիմքերի առկայության պայմաններում, երբ դեռ չի առաջացել ենթադրաբար քրեական հանցագործության կատարման արդյունքում ձեռքբերված գույքի բռնագրավման անհնարինությունը, նպատակահարմար չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի զուգահեռ իրականացումը: Նշվածի հաշվառմամբ առաջանում է նաև քրեական վարույթի շրջանակում գույքի բռնագրավման և անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի պարագայում քրեական արդարադատության մեխանիզմը պատշաճորեն չգործարկելու և դրա փոխարեն ապացուցման բեռի բաշխվածության տեսանկյունից պետության համար ավելի բարենպաստ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգի կիրառման ռիսկը: Նշված ռիսկը չէզոքացնելու նպատակով պետք է բացառել համապատասխան հանցագործությունների փաստի առթիվ ընթացող քրեական վարույթներին զուգահեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի՝ ուսումնասիրության նախաձեռնումը:

Նախագծի 2.19 գործողությամբ նախատեսվում է ընդլայնել և արդիականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմները, ինչպես նաև կատարելագործել միջազգային փոխօգնության մեխանիզմները: Կարևոր է նշել, որ ՖԱԹՖ հանձնարարականների, ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատման զեկույցների և միջազգային փորձի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ առավել արդյունավետ է պետությունների իրավասու մարմինների մեջ ուղիղ հաղորդակցումը փոխադարձ իրավական օգնության շրջանակներում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ՀՀ համար հանցագործությունների բացահայտման և ապօրինի գույքի բռնագանձման շրջանակներում հատուկ կարևորություն ունեցող պետությունների որոշումը, վերջիններիս և ՀՀ իրավասու մարմինների միջև աշխատանքային հարաբերությունների հաստատումը, երկկողմ հուշագրերի կամ փոխադարձ իրավական օգնության պայմանագրերի ստորագրումը:

Նաև չափազանց կարևոր է իրավասու մարմինների վերապատրաստումը փոխադարձ իրավական օգնության հարցումներ իրականացնելու մեթոդների վերաբերյալ: Օտարերկրյա պետություններից շատերն ունեն փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ ընթացակարգային կանոններ, որոնք կարող են ներառել փոխադարձ իրավական օգնության հարցմամբ տրված տեղեկատվության լիարժեքության, մանրամասնության, փաստաթղթերի ամբողջականության և այլնի վերաբերյալ պահանջներ: Կարևոր են հարցումն ուղարկող իրավասու մարմնի աշխատակիցների գիտելիքները՝ հարցումներին ժամանակին և լիարժեք պատասխաններ ստանալու տեսանկյունից:

Առաջարկություն

Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրի 2.16-2.19 կետերում նախատեսել հետևյալ գործողությունները՝

- Ընդլայնել շահագրգիռ անձանց՝ արդար դատաքննության իրավունքի արդյունավետ երաշխիքները, այդ թվում՝ նրանց կողմից ապացույցների ձեռքբերման առումով հավելյալ երաշխիքների ապահովման (օրինակ՝ տեղեկատվության հարցումներ

իրականացնելիս ուսումնասիրությունն իրականացնող իրավասու մարմնի օժանդակության ապահովման) և գույքի գնահատման փորձաքննությունների իրականացման ժամկետների կրճատման միջոցով՝ մասնագիտացված կարողությունների զարգացման և այդ բնագավառում գնումների գործընթացի բարելավման միջոցով:

- Ստեղծել պետական (կամ հավատարմագրային) կառավարման հանձնված ակտիվների շտեմարան, որը կներառի տվյալներ առնվազն դրանց գտնվելու վայրի և արժեքի մասին և կիրապարակվի առցանց:
- Ստեղծել բռնազանձված գույքի կառավարման մոդել՝ նախանշելով որոշ հստակ որակական բնութագրեր և պահանջներ: Մասնավորապես՝ ստեղծվող մարմինը պետք է օժտված լինի հաշվետվողականության բարձր մակարդակով, բռնազանձված գույքի և միջոցների հետագա օգտագործման հարցերով որոշումներ կայացնելիս օրենսդրությամբ ամրագրվի ոլորտային ՀԿ-ների, կոռուպցիայից տուժած կոնկրետ խմբերի հետ խորհրդակցելու պարտադիր պահանջ և այլն:
- Գործարկել ինտեգրված հարթակ, որը կապահովի ակտիվների վերադարձման մասնագետների, հետախուզության ստորաբաժանումների, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակումը: Ստեղծել հասանելիության հնարավորություն նաև այլ պետական մարմինների տվյալների բազաներին:
- Կատարել փոփոխություններ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին» ՀՀ օրենքում բացառելով համապատասխան հանցագործությունների փաստի առթիվ ընթացող քրեական վարույթներին զուգահեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթի՝ ուսումնասիրության նախաձեռնումը:
- Նախատեսել գործողություններ ամրապնդելու հանցագործությունների բացահայտման և ապօրինի գույքի բռնազանձման շրջանակներում առանցքային պետությունների հետ միջազգային համագործակցության հիմքերը, ինչպես նաև զարգացնելու իրավասու մարմինների համապատասխան կարողությունները:

36. Ռազմավարության նախագծով նախատեսվում է ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում, ընդ որում՝ ողջունելի է, որ նախատեսվում է վերանայել ազդարարման համակարգի ներկայիս մոդելը, որը փաստացի անարդյունավետ է:

Միաժամանակ, պետք է նշել, որ 2022թ.-ին «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք դրական փոփոխություններ, սակայն հարակից օրենքներում նշված փոփոխություններից բխող փոփոխություններ չեն կատարվել: Այս մոտեցումը չի նպաստում ազդարարման ինստիտուտի կայացմանը և դրա նկատմամբ հանրային վստահությանը:

Ռազմավարության նախագծով որպես ազդարարման համակարգի խնդիր նշվում է, որ դեռևս ներդրված չէ ազդարարման խրախուսմանն ուղղված որևէ կառուցակարգ: Իսկ նախագծի 2.23 գործողությամբ առաջարկվում է դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը: «խրախուսում» բառը տպավորություն է ստեղծում, որ խոսքը դրամական փոխհատուցման մասին է, ինչը ամբողջությամբ խեղաթյուրում է ազդարարման նպատակն ու դրա հանրային կարևորությունը: Ազդարարումը պետք է հիմնվի մարդու ազնվության, դեպի արդարությունը

ծգտելու, հանրության ու պետության առջև պատասխանատվություն ստանձնելու, այլ ոչ թե՛ նյութական մոտիվացիայի վրա: Այս առումով, խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի և փաստացի չարաշահումների: Իսկ եթե խոսքը մոտիվացիոն այլ գործիքների մասին է, ապա ընտրված եզրույթը խնդրահարույց է:

Բացի վերոնշյալը, խնդրահարույց են ազդարարման որոշ ավելորդ կանոնակարգումներ, որոնք խոչընդոտում են ինստիտուտի կայացմանը: Մասնավորապես՝ ազդարարման համակարգի մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը»: Հատկանշական է, որ միջազգային չափանիշների համաձայն պաշտպանության ենթակա են այն անհատները, ովքեր հաղորդում են իրենց աշխատավայրում կոռուպցիայի հետ կապված այնպիսի խախտման մասին, որն իրենց համոզմամբ ճիշտ է հաղորդում ներկայացնելու պահին: Տեղեկության ճշմարտացիությունը և ամբողջականությունը ստուգելը չափազանց մեծ բեռ է դնում ազդարարի վրա, և չի կարող լինել վերջինիս պարտականությունը: Ազդարարի վրա նման բեռ դնելը և դրա չիրականացման համար վերջինիս պաշտպանությունից զրկելը չի խթանում ազդարարման համակարգի կայացմանը, ավելին, անձանց ետ է պահում խախտման մասին ազդարարելուց:

Առաջարկություն

- Վերանայել կամ հստակեցնել ազդարարման «խրախուսման» մոդելը և օգտագործել ճիշտ մեխանիզմներ ու արտահայտություններ՝ տարընթերցումներից ու տարակարծություններից խուսափելու և «ազդարարման» կոնցեպտը չխեղաթյուրելու համար:
- Վերանայել ազդարարման նկատմամբ պահանջները՝ հնարավոր ազդարարներին ազատելով ավելորդ ծանրաբեռնվածությունից՝ ստուգելու տեղեկության ճշմարտացիությունը և ամբողջականությունը, ինչը ինքնին կարող է խթան ստեղծել ազդարարման պրակտիկան տարածելու համար:

37. «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման տեսլականի ուրվագծում» ռազմավարական ուղղության ներքո ներկայացված խնդիրը լիարժեքորեն չի արտացոլում միջազգային պարտավորություններից բխող խնդրո առարկան: Մասնավորապես, «Հիմք ընդունելով նույն զեկույցի (այստեղ խոսքը ՏՀԶԿ ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ Հայաստանի զեկույցի մասին է) դիտարկումները՝ անհրաժեշտ է նաև իրականացնել իրավաբանական անձանց նկատմամբ սանկցիաներ կիրառելիս համաչափության սկզբունքի երաշխավորման առնչությամբ առկա վիճակի գնահատում և ըստ անհրաժեշտության՝ բարեփոխումների իրականացում: Չեկույցի դիտարկումներին

(ցուցիչ 9.2) համապատասխան առաջարկվում է խստացնել կոռուպցիոն հանցագործությունների համար նախատեսված պատիժները և դատավորների վերապատրաստման և դատավորների թեկնածուների հավակնորդների ուսումնական դասընթացների մշակման շրջանակում հատուկ ուշադրություն դարձնել կոռուպցիոն հանցագործությունների համար պատիժ նշանակելիս, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, որպես լրացուցիչ պատժի, կիրառելիության հարցերին:

Առաջարկություն

- Գործնականում ապահովել քննչական գործողությունները կատարելիս տեխնիկական միջոցների պարտադիր կիրառման օրենսդրական պահանջի կիրառումը՝ քննչական մարմնի անհրաժեշտ նյութատեխնիկական կարողությունների ապահովման և զարգացման, ինչպես նաև քննիչների շարունակական վերապատրաստումների, դատավարական նոր ընթացակարգի արդյունավետ կիրառման հմտությունները զարգացնելու միջոցով:
- Կատարել ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխություն՝ նախատեսելով, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև հանցանքը իրավաբանական անձի նկատմամբ իրական (փաստացի) վերահսկողություն իրականացնող անձանց կողմից կատարված լինելու դեպքում:
- Վերանայել քրեական օրենսգրքով իրավաբանական անձանց նկատմամբ տուգանք պատժամիջոցի կիրառման սկզբունքները՝ վերացնելով տարեկան համախառն եկամտի 20% ավել տուգանք նշանակելու արգելքը և տուգանքի չափը սահմանելով որպես ապօրինի ստացված եկամտի բազմապատկիչ:

ՆՊԱՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

38. Գործողությունների ծրագրի «Հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում» բաժնի 3.1-3.5 և 3.9 գործողություններում գործողություններով՝ իրականացված ծրագրերի արդյունքների գնահատում նախատեսվում է իրականացնել 2025թ. և 2026թ. ավարտին: Մինչդեռ թիրախային և արդյունավետ իրականացման նկատառումներով կարիք կա իրականացնելու արդյունքների գնահատում հատկապես առաջին՝ պիլոտային փուլի ավարտին, այնուհետ՝ վեր հանված կարիքների և արդյունքների հիման վրա կատարել ծրագրերի բարելավում, հետո միայն ընդլայնել դրանց ներդրման ծավալները: Կարևոր է նաև գնահատման փուլում մասնագիտացված ԶՀԿ-ների ներգրավման հստակ մեխանիզմների նախատեսումը:

Առաջարկություն

- «Հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում» բաժնի 3.1-3.5 և 3.9 գործողություններում իրականացված ծրագրերի արդյունքների մասնակցային եղանակով գնահատում նախատեսել նաև 2024 թվականին իրականացվելիք պիլոտային ծրագրերի ավարտին:

39. Նույն բաժնում 3.2 և 3.4 գործողությունների «Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ» հատվածում նշված է, որ վերապատրաստման ծրագիրը ներդրվել և գործում է ուսումնական հաստատություններում: Քանի որ վերապատրաստման ծրագրերն իրականացվում են ԿԳՄՄ-ի կողմից երաշխավորվող վերապատրաստող կազմակերպությունների կողմից, ուստի դրանք չեն կարող ներդրվել և գործել ուսումնական հաստատություններում

Առաջարկություն

- Գործողությունը վերաձևակերպել և նշել, որ վերապատրաստման ծրագրերը կազմակերպվում են ուսումնական հաստատությունների համար:

40. Նույն բաժնում 3.6 գործողության 2025 և 2026 թվականների կատարողականի թիրախներում սահմանվում են, որ «Ծրագիրը իրականացվել է առնվազն 10 հետբուհական ուսումնական հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում»: Հայաստանյան հետբուհական ուսումնական հաստատությունները տեղակայված են բացառապես քաղաքներում, ուստի գյուղական հետբուհական ուսումնական հաստատություններում իրականացնելու պահանջը հնարավոր չէ ապահովել:

Առաջարկություն

- Նշված գործողության 2025 և 2026 թվականների կատարողականի թիրախներից հեռացնել «որոնցից կեսը գյուղական համայնքներում» հատվածը:

41. Նույն բաժնի 3.7 գործողության 2026 թվականի կատարողականի թիրախներում նախատեսվում է ներդնել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ, իսկ «Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ» հատվածում նախատեսվում է, որ «հարթակում գրանցված և դրանցից օգտվող անձանց թվաքանակը հասնում է 1000-ի»: Կատարողականի թիրախներում նախատեսված չեն հարթակի իրազեկման նպատակով իրականացվող գործողություններ, ինչի պատճառով հարթակում գրանցված 1000 անձանց թվականակի ապահովումը կարող է լինել անիրատեսական:

Առաջարկություն

- Նախատեսել գործողություն՝ թիրախային խմբերի շրջանում իրականացնելով իրազեկման աշխատանքներ հարթակի մասին:

42. Նախագծի 3.11-րդ գործողությունն ուղղված է հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը՝ դպրոցներում հիմնելով աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով: Թեև տվյալ գործողությունն իր էությունը բավականին առաջադեմ է, կա մտահոգություն, որ դրանց

ստեղծումը կարող է լինել արհեստական ու ոչ կայուն կամ պետության համար ռեսուրսատար՝ այն դեպքում, երբ դրանք տվյալ փուլում առաջնահերթ չեն:

Փոխարենը, կարծում ենք, հարկավոր է ձևավորել առավել ճկուն և պետության համար ավելի քիչ պարտավորեցնող համակարգ, որը սակայն կկարողանա ապահովել հակակոռուպցիոն կրթական միջոցառումների տարածումը: Օրինակ կարող են հանդիսանալ նախագծային ուսուցման շրջանակներում հակակոռուպցիոն թեմաներով իրականացվող նախագծերը, դասողեկական ժամերի ընթացքում սահմանված թեմաների քննարկման ցանկում հակակոռուպցիոն թեմաների ներառումը, ուսանողական և աշակերտական խորհուրդների կողմից կազմակերպվող հակակոռուպցիոն ծրագրերը և այլն:

Առաջարկություն

- Մշակել ու գործարկել մոտիվացիոն համակարգ՝ խրախուսելու ուսումնական հաստատությունների նախաձեռնողականությունը և հակակոռուպցիոն ոլորտում սեփական ծրագրերը:

43. Նույն բաժնի 3.12 գործողության «Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ» հատվածում նախատեսվում է «Հասարակության լայն շրջանակը հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրով սահմանված կայուն պարբերականությամբ տեղեկացվում է հակակոռուպցիոն քաղաքականության, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների և պարտականությունների, ազդարարման համակարգի, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության, իրական շահառուների, գնումների և այլ թիրախային թեմաների վերաբերյալ, հետևողականորեն քայլեր են ձեռնարկվում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ»: Նշված ցուցանիշը չափելի չէ և բացակայում են քանակական ցուցիչները:

Առաջարկություն

- Վերախմբագրել 3.12 գործողության «Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ» հատվածը, այն դարձնել չափելի, ներառել քանակական ցուցիչներ:

44. Նախագծի 3.13-րդ գործողության համաձայն՝ զարգացվելու են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում: Ընդհանրապես կարողությունների զարգացման բաղադրիչը կայուն չի լինի, եթե դրան զուգահեռ ԿԿՀ-ին աջակցություն չտրամադրվի մշակելու հստակ գործողությունների պլան, մոնիտորինգային ցուցանիշներ և բյուջե, որով տվյալ մարմինը կիրականացնի այդ իրազեկումն ու ոչ ֆորմալ կրթությունը:

Առաջարկություն

- Լրամշակել տվյալ գործողությունն ու վերջնարդյունքը՝ նախատեսելով աջակցություն ԿԿՀ-ին ոչ ֆորմալ կրթության զարգացման և հանրային իրազեկման ուղղությամբ գործողությունների պլան և բյուջե կազմելու համար:

45. Նախագծի 3.14 գործողությամբ առաջարկվում է զարգացնել ԶԳԿ-ների և ԶԳԿ-ների ցանցերի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման նպատակով: Նույն կերպ, առաջարկվում է Գործողություն 5.2.3-ը, որով նախատեսվում է զարգացնել Հակակոռուպցիոն ոլորտի ԶԳԿ-ների կարողությունները մասնագիտական վերապատրաստումների եղանակով: Հաշվի առնելով, որ պետության ռեսուրսները սուղ են, մինչդեռ ԶԳԿ-ները կարող են ոչ ֆորմալ կրթության և իրազեկման նպատակով գումարներ հայթայթել դոնոր կազմակերպություններից՝ ցանկալի է, որ պետությունն իր վրա բեռ չվերցնի և առկա սուղ ռեսուրսները ծախսի առավել արդյունավետ:

Առաջարկություն

- Նախագծից հանել նշված գործողությունները, իսկ քաղիասարակության կրթության կամ իրազեկման նպատակով խրախուսել դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

46. «Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտի կատարելագործում» ռազմավարական ուղղության առնչությամբ, հարկ է արձանագրել, որ գործող օրենսդրությամբ առկա են որոշակի կարգավորումներ, որոնք ուղղված չեն իրական շահառուների բացահայտման համակարգի արդյունավետության ապահովմանը՝ չհիմնավորված կերպով կրկնակի ֆինանսական բեռ դնելով հայտարարագիր ներկայացնող անձանց վրա: Այսպես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 60.4-րդ հոդվածի համաձայն՝ Իրական շահառուների փոփոխության գրանցման համար գործակալություն է ներկայացվում՝ 1) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ նոր հայտարարագիր, 2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Այսինքն՝ այն դեպքերում, երբ իրական շահառուի փոփոխությունը տեղի է ունենում իրավաբանական անձի մասնակցի կամ գործադիր մարմնի փոփոխությամբ պայմանավորված (ինչը գործնականում տեղի է ունենում դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում), իրավաբանական անձանց պետական ռեգիստրում մասնակցի (ինչը մեծամասամբ տեղի է ունենում նաև կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու հետ զուգահեռ, որի համար գանձվում է առանձին պետական տուրք) կամ գործադիր մարմնի փոփոխությունը գրանցելու համար գանձվում է պետական տուրք: Ի լրումն դրան, 40-օրյա ժամկետում իրավաբանական անձը

պարտավոր է ներկայացնել իրական շահառուի վերաբերյալ նոր հայտարարագիր, որով կրկին կարձանագրվի մասնակցի կամ գործադիր մարմնի (կախված կոնկրետ հանգամանքներից) փոփոխությամբ պայմանավորված իրական շահառուի վերաբերյալ տվյալների փոփոխությունը: Նույնը վերաբերում է համապատասխան անձանց անձնագրային կամ այլ տվյալների փոփոխությանը, որը ևս պետք է անցնի կրկնակի գործընթացի միջով:

Գտնում ենք, որ իրական շահառուի տվյալների փոփոխության դեպքում նոր հայտարարագիր ներկայացնելու համար պետական տուրքի գանձման պահանջը իրավաչափ չէ, քանի որ պետական ռեգիստրում նույն տվյալի/տեղեկության փոփոխության գրանցման համար տարբեր ընթացակարգերի շրջանակներում անձին առաջադրվում է կրկնակի պետական տուրք վճարելու պահանջ, որը արդարացված չէ և չի նպաստում իրական շահառուների բացահայտման ինստիտուտի զարգացմանը:

Առաջարկություն

- Օրենսդրական փոփոխությունների կատարման միջոցով վերացնել իրական շահառուի տվյալների փոփոխության դեպքում նոր հայտարարագիր ներկայացնելու համար պետական տուրքի վճարման պահանջը:

2. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գույքի, ինչպես նաև շահերի հայտարարագրերում, դրանց կիրառումն ապահովող այլ ակտերում բավարար չափով չի արտացոլվել իրական շահառուի հայտարարագրման ինստիտուտը՝ հաճախ նույնացնելով այն ֆորմալ բաժնեմասնակցության հետ: Օրինակ՝ ՀՀ կառավարության 30.01.2020թ.-ի թիվ 102-Ն որոշմամբ բավարար չափով արտացոլված չեն համապատասխան իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը, իսկ հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցը ուղղակիորեն նույնացնում է իրական շահառուի ինստիտուտը բաժնեմասնակցության ձեռքբերման հետ:

Առաջարկություն

- ՀՀ կառավարության 30.01.2020թ.-ի թիվ 102-Ն որոշման և Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցի մեջ փոփոխություններ կատարելու միջոցով՝ պատշաճ կերպով սահմանել իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը:

47. «Պետական գնումների գործընթացում բարելավելության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործում» ուղղության ներքո ռազմավարության նախագծում կարևորվում է գնումների գործընթացում կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում շահերի բախման և բարելավելության կառուցակարգերի շարունակական կատարելագործումը: Հանրային գնումների գործընթացում շահերի

բախման իրավիճակների կառավարման գործիքակազմերի ներդրման տեսանկյունից, ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի 4.12-րդ կետով նախատեսվում է ուսումնասիրել «պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը ու ազդեցությունը պետական գնումների գործընթացներում բացառելուն, շահերի բախման կառուցակարգերը կատարելագործելուն» միջոցառումը, որի հիման վրա պետք է մշակվեն օրենսդրական կարգավորումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի շահերի հայտարարագրի բովանդակությունը վերտառությամբ հոդվածի 6-րդ մասով, հայտարարագրման ենթակա է «...Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը)»: Այդուհանդերձ, օրենսդրությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների համար սահմանված չէ որևէ արգելք կամ սահմանափակում՝ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև՝ նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների կողմից հայտարարված գնումների մրցույթներին մասնակցության մասով: Միջազգային պրակտիկայում²¹ նման սահմանափակումները լայնորեն կիրառվում են, որոնք հանդիսանում են գնումների գործընթացում շահերի բախման կանխարգելման լավագույն գործիք:

Առաջարկություն

Ելնելով վերոնշյալից ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրի 4.12 կետում նախատեսել՝

- «Հանրային ծառայության մասին» կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ մշակվող օրենքի նախագծով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամ հանդիսացող անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար սահմանափակել այն պատվիրատու մարմնի գնման գործընթացին մասնակցելու հնարավորությունը, որտեղ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնավարում է կամ համակարգում է այդ ոլորտի գործունեությունը:
- ԿԿՀ-ին վերապահել պետական և համայնքային գնումների գործընթացում ներգրավված կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամի մասնակցությամբ գնումների գործընթացներում ներգրավվածության վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու գործառույթ:

²¹ «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում», <https://transparency.am/hy/publication/pdf/256/9410>: «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, <http://www.acas.rs/law-and-regulations/laws/lawacas>: «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wpcontent/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>, «Հանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքը, <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials>

- Այդ գործառնության շրջանակներում օրենսդրորեն ԿԿՅ-ին լիազորել կասեցնելու կամ առաջարկություն ներկայացնելու առաջին ճանաչելու պետական կամ համայնքային գնումների գործընթացում կնքվելիք կամ կնքված այն պայմանագրերը, որոնցում կողմ հանդիսացող կազմակերպություններում ներգրավված են պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը:

48. Նախագծի 4.17-րդ գործողության համաձայն՝ կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար պետք է զարգացվեն և կատարելագործվեն ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները: Որպես տվյալ գործողության թիրախ 2026թ. համար նախատեսված է «Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ: Կազմակերպվել և անցկացվել են առնվազն վերապատրաստման 8 դասընթացներ»: Առաջարկում ենք սույն գործողության ներքո բացի վերապատրաստումներից նաև մշակել քննության վարման ուղեցույցներ և պրոտոկոլներ, որպեսզի քննչական գործողությունների միատեսակ պրակտիկա ձևավորվի տվյալ մարմիններում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

49. Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագիրը վերնագրված է «ՀՀ հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր», որտեղ «ազգային» բառը ավելացնելու նպատակը անհասկանալի է: Ռազմավարության նախագծի վերնագրում այն բացակայում է, նաև «Հայաստանի Հանրապետություն» եզրույթը կարծես թե ինքնին բնորոշում է փաստաթղթի ազգային լինելու հանգամանքը:

Հաշվի առնելով ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի հաստատման և ներդրման ժամկետները, կասկածի տակ է դրվում 2023թ. երկրորդ եռամսյակում նախատեսված գործողությունների իրատեսականությունը:

Ինչպես և նշվել էր վերևում կոռուպցիայի կանխարգելման օրինակով (տես՝ Նպատակ 1. Կոռուպցիայի կանխարգելման բաժին, կետ 8), ռազմավարության նախագծում սահմանված չեն հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական քաղաքականությունների (փաստաթղթում դրանք ներկայացված են որպես նպատակներ) ուղղությամբ 2023-2026 թվականների ռազմավարության նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցիչները:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի վերնագրից դուրս բերել «ազգային» բառը:
- Առավել իրատեսական պլանավորման միջոցով իրականացնել գործողությունների վերաբաշխում ըստ տարիների՝ պակասեցնելով 2023թ. նախատեսված ծանրաբեռնվածությունը, իսկ գործողությունների իրականացումը բաշխել այնպես, որպեսզի մինչև 2026 թվականի վերջ կանխատեսելի լինեն գործնականում հիմնախնդրի լուծման ակնկալվող արդյունքները:
- Ռազմավարության նախագծում սահմանել ռազմավարության հիմնական բաղադրիչների 2023-2026 թվականների հիմնական նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցիչները:

50. Ռազմավարության նախագծի «Կանխարգելման նպատակ» բաժնի ներքո շարադրված են կանխարգելման ոլորտի խնդիրները, մինչդեռ դրանց լուծման ռազմավարական լուծումները բացակայում են: Շարադրանքում բացակայում է կոնկրետությունը, պարզ չէ, թե ինչ ենք ուզում ստանալ, ինչի ենք ձգտում հասնել: Համանման տրամաբանությամբ էլ կառուցված են տվյալ նպատակի ներքո առաջարկվող գործողությունները: Մասնավորապես, նշված գործողությունների ծրագրի կանխարգելման բաժնի 27 գործողություններից միայն 7-ի (1.3, 1.4, 1.10, 1.18, 1.20, 1.21, 1.26) կատարողական թիրախների ներքո է առկա կոնկրետ սահմանված բովանդակային անելիքներ: Մյուս բոլոր գործողությունների դեպքում առաջարկվում է իրականացնել կարիքների գնահատում, միջազգային փորձի ուսումնասիրություն, քննարկումներ և իրավական ակտերի նախագծերի մշակում ու ՀՀ կառավարություն ներկայացում: Արդյունքում ստացվում է, որ առաջիկա երեք տարիների ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ պետք է ընդամենը փորձենք բացահայտել առաջադրված խնդիրների լուծումները և մշակենք իրավական ակտերի նախագծեր: Ընդ որում, այս գործողությունների վերջնարդյունքները հիմնականում սահմանափակվում են օրենսդրական ակտերի նախագծերի ՀՀ կառավարության կողմից ընդունմամբ և ՀՀ ԱԺ-ին ներկայացման գործընթացով, իսկ գործնականում կիրարկման գործողություն և դրա արդյունքներ չեն նախատեսվում: Նաև, համապատասխանաբար, առկա չեն գործողությունների գործնականում կիրառման գնահատման (վերջնական և միջանկյալ) քանակական ու որակական ցուցիչները:

Կոռուպցիայի կանխարգելման նպատակով առաջարկվող գործողությունների շարքում 2026 թվականի համար կատարողականի թիրախներ հիմնականում նախատեսված չեն և արդյունքներ չեն ակնկալվում: 2025 թվականի համար՝ կատարողականի թիրախներով բովանդակային տեսանկյունից ամբողջությամբ ծանրաբեռնված է ընդամենը 4 գործողություն (1.1, 1.3, 1.4, 1.16), մասնակի՝ 2 գործողություն (1.6 և 1.7): Տասը գործողությունների մասով արձանագրված է միայն «Նախագծերը ներկայացվել են ՀՀ Կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել» ակնկալվող արդյունքը, իսկ 11 գործողությունների մասով կատարողական ոչ մի թիրախ պլանավորված չէ: Արդյունքում՝ 27 գործողությունների հիմնական մասի իրականացումը նախանշված է ավարտին հասցնել 2024 թվականին, որը նշանակում է, որ ռազմավարական, միջնաժամկետ ծրագրի փոխարեն ձևավորել ենք կարճաժամկետ՝ իրավիճակային լուծում պահանջող, օպերատիվ գործողությունների պլան, որում

գործողությունների կոնկրետ սպասվող վերջնական (միջանկյալ) արդյունքները չեն ապահովում ռազմավարական խնդիրների լուծումը:

Ռազմավարության նախագծի կանխարգելման բաժնում արձանագրված խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ առաջարկությունների բացակայությունը իր հետքն է թողել գործողությունների ծրագրում վերջնական, միջանկյալ արդյունքների քանակական և որակական ոչ գնահատելի ցուցիչների սահմանման վրա: Նման մոտեցմամբ ռազմավարության նախագծի և դրանից բխող գործողությունների ծրագրի կառուցումը, կատարողականի գնահատման և մոնիտորինգի իրականացման տեսանկյունից գնահատելի չէ:

Առկա են խնդիրներ նաև պատասխանատու կառույցների առումով: Այսպես, Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի «կանխարգելման բաժնի» պատասխանատու կատարող մարմինների մասով՝ 27 գործողություններից 24-ի համար ԿԿՀ-ը ճանաչված է որպես առաջին պատասխանատու կատարող: Մինչդեռ, 27 գործողություններից 17-ի մասով որպես վերջնական արդյունք ակնկալվում է օրենսդրական նախագծերի մշակում, որի՝ ինչպես և առհասարակ հակակոռուպցիոն քաղաքականության պատասխանատու մարմինը Հայաստանում ՀՀ արդարադատության նախարարությունն է: Միաժամանակ, ըստ հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի նախագծի՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ընդամենը 3 գործողությունների (1.21, 1.22 և 1.23)՝ օրենսդրական ակտերի մշակման համար:

Բացի այդ, հարկ է նշել, որ ԿԿՀ-ի կողմից օրենսդրական ակտերի նախագծերի մշակմանը ներգրավվելը ուղղակիորեն չի բխում ԿԿՀ-ի մանդատից: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ով հանձնաժողովին վերապահված է «4) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցելու» գործառույթ, ինչը սակայն չի նշանակում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման պատասխանատու հանդիսանալը: ԿԿՀ-ը պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելման իրականացման համար, որի առումով նախատեսվող գործողությունները թերի են, իսկ Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրով օրենսդրական մեծածավալ աշխատանքի վերապահումը ԿԿՀ-ին խնդրահարույց է և ռիսկային:

Առաջարկություն

- Ռազմավարության նախագծում, մասնավորապես՝ «կանխարգելման» բաժնի շարադրանքում առանձնացված հիմնախնդիրների ներքո ներկայացնել նաև դրանց լուծման ուղիները և ակնկալվող արդյունքները:
- Ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրում գործողությունները խմբավորել ըստ ռազմավարության տեսքտում բացահայտված հիմնախնդիրների և ներկայացնել միջացառումների տեսքով, իսկ «կատարողական թիրախները» վերածել գործողությունների: Որպես օրինակ, բարեվարքության ուսումնասիրության հիմնախնդրի 1.12-ից 1.16-րդ գործողությունները միավորել մեկ միջոցառման ներքո,

իսկ դրանցից բխող գործողությունները ներկայացնել կատարողականի թիրախների փոխարեն՝ ըստ տարիների, սահմանելով ուղղակի արդյունքներ:

- Ռազմավարության նախագծի միջոցառումների ծրագրում գործողությունների ուղղակի, միջանկյալ և վերջնական ցուցիչները սահմանել հիմնախնդիրների լուծման գործնականում ակնկալելի քանակապես և որակապես գնահատելի արդյունքներով:
- Միջոցառումների ծրագրում միջանկյալ արդյունքները սահմանել կանխարգելման բաժնի ռազմավարական ուղղությունների համար, իսկ վերջնական արդյունքները՝ կանխարգելման ողջ ուղղության կամ ենթանպատակի համար: Նման մոտեցումը հնարավորություն կտա ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մոնիտորինգի ժամանակ համակողմանիորեն գնահատել ռազմավարության բոլոր մակարդակներում կատարողականը:
- Վերանայել ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրի կանխարգելման բաժնի պատասխանատու կատարողների շրջանակը՝ այն հաշվով որ օրենսդրական ակտերի նախագծերի մշակման հիմնական (առաջին) պատասխանատու կատարող հանդես գա ԶԶ արդարադատության նախարարությունը, իսկ ԿԿԶ-ն, որպես հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը մասնակցության գործառույթի կրող՝ կարող է օժանդակել նման իրավական ակտերի նախագծերի մշակմանը: